ՀՈՒՅՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ Ա-Ի ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Դարերով իմաստնացած պատմություն ունի Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցին, որի կերտողները հոգևոր առաջնորդներն են եղել՝ Հայոց Հայրապետները: Ու ամեն մի առաջնորդ յուրովի է հարստացրել հարապատ ժողովրդի անցած ու անցնելիք ուղին՝ վառ պահելով նախնյաց հավատի մշտանորոգ կանթեղը:

Այսօր մի նոր էջ է արձանագրվում Հայաստանյայց Եկեղեցու պատմության մեջ, որն առավել է հարստանում Եկեղեցիների համեղբայրության, ժողովուրդների բարեկամության ու բարեկամ պետությունների փոխհարաբերությունների ամրացման դարերից ավանդված հարուստ հենքի շնորհիվ: Իսկ մերօրյա պատմությունը գրվում է Հայոց Եկեղեցու 131-րդ գահակալի՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորիմաստ ու հայրենաշեն գործունեությամբ: Որպես ասվածի հավաստում թող ընկալվեն քույր Եկեղեցիների Հովվապետերի պաշտոնական փոխադարձ այցելությունները: Հայ հավատավորը լավ է հիշում Նորին Սրբության գահակալության անցած երկու տարիներին տեղի ունեցած պատմական իրադարձությունները: Դրանք առնչվում են հոգևոր կյանքի բոլոր ոլորտներին՝ մշակութային, կրթական, շինարարական...

Այս ամենը ճոխացնելու եկավ նաև Հույն Եկեղեցու հոգևոր պետի փոխադարձ պաշտոնական այցելությունը, կի այն առավել պատմական էր ու կարևոր: Պատմական էր, որովհետև Դ դարից հետո սա ամենանշանակալից իրադարձություններից էր հայ-բյուզանդական միջեկեղեցական հարաբերություններում: Հայոց Եկեղեցու պատմության մեջ նոր էջ բացվեց, ուր գրանցվեց Հույն Ուղղափառ Եկեղեցու հովվապետի այցելությունը Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

ԺԱՄԱՆՈՒՄ

1997 թվականի հուլիսի 21-ից 24-ը, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի պաշտոնական հրավերով, փոխադարձ այցելությամբ Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Հույն Ուղղափառ Եկեղեցու հոգևոր առաջնորդ, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ի գլխավորած պատվիրակությունը:

Այցելության չորս օրերի ընթացքում Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի ընկերակցությամբ, ունեցավ մի շարք պաշտոնական կարևոր հանդիպումներ, այցելեց աղետի գոտի, ծանոթացավ Հայոց հինավուրց երկրի անկրկնելի գեղեցկություններին ու հայ ժողովրդի մտքի անգնահատելի թռիչքին:

«ԶՎԱՐԹՆՈՑ» ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Հուլիսի 21-ին, Երևանի ժամանակով ժամը 13.05-ին, Հայաստանի Հանրապետություն ժամանեց Կոստանդնուպոլսի Տիրեպերական Պատրիարք Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ը:

Նորին Սրբության շքախմբի մաս էին կազմում Եփեսոսի միտրոպոլիտ Նորին Գերազանցություն Խրիսոստոմոսը, Շվեյցարիայի միտրոպոլիտ Նորին Գերազանցություն Դամասկինոսը, Ֆիլադելֆիայի միտրոպոլիտ Նորին Գերազանցություն Մելիտոնը, Սերաֆիմ վարդապետը, սարկավագ Մաքսիմոսը, Աթենքի լրատվական գործակալության ներկայացուցիչ Ալկիս Կուրկուլասը, Պատրիարքի մամլո պատասխանատու Ստեփանոս Պապադոպուլոսը, ֆոտոլրագրող Նիկոլաս Մանգինասը, Պատրիարքարանի գործերի գլխավոր կառավարիչ Կարագիորգիսը, Թուրքիայի լրագրողների միության գլխավոր քարտուղար Լեյլա Թավսանօղլուն:

Պաշտոնական պատվիրակությանն ուղեկցում էր Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչ, Հայոց Պատրիարքարանի Կրոնական ժողովի ատենապետ Տ. Մեսրոպ արքեպսկ. Մութաֆյանը:

«Զվարթնոց» օդանավակայանում Տիեզերական Պատրիարքին դիմավորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետն իր շքախմբով, Հայաստանի ներքին թեմերի և Ֆրանսիայի, Ավստրիայի, Կանադայի, Գերմանիայի, Երուսաղեմի, Ամմանի, Ռուսաստանի, Վրաստանի թեմակալ առաջնորդները, Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ներկայացուցիչը, Հայաստանի Հանրապետության նախագահի խորհրդական Վահագն Խաչատրյանը, Սկզբային ժողովի աշխատակազմի ղեկավար Աշոտ Անտինյանը, << մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարար Արմեն Սմբատյանը, << կրոնից գործոց կոմիտեի նախագահ Լևոն Սուքիասյանը, Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան Յակովոս Սպեցիոսը, Հունաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սրման Կիրակոսյանը, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ և պաշտոնատար այլ անձինք:

ՃԵՊԱԶՐՈՒՅՑ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

Ողջագուրանքից հետո հյուրերն առաջնորդվեցին դեպի օդանավակայանի բարձրաստիճան հյուրերի ընդունման սպասասրահ, ուր և տեղի ունեցավ ճեպակրույց, որին ներկա էին << լրատվական գրեթե բոլոր ծառայությունների մեծաթիվ ներկայացուցիչներ:

Մինչ ճեպակրույցը, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջույնի խոսք հղեց Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին, ինչպես նաև Հույն Ուղղափառ Եկեղեցու պատվիրակությանը և նրանց այցը մեր երկիր որակեց որպես նոր էջ քրիստոնեական եղբայրության գործնական հաստատման տեսակետից: Շարունակելով իր խոսքը, Հայոց Հայրապետն առանձնակի նշեց.

«Մեզ համար բացառիկ ուրախության մի պահ է այս պահը ոչ թե միայն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, այլ մեր ամբողջ հայ ժողովրդի համար

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄ

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ

Հայաստանում և Սփյուռքում: Մենք այսօր, պատմությանը մեջ առաջին անգամ լինելով, ողջունում ենք Մեր սիրեցյալ եղբորը՝ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Տիեզերական Պատրիարքին, և սա մեծանուն, հռչականուն Կոստանդնուպոլսո Պատրիարքության, Հույն Օրթոդոքս Եկեղեցու և Հայ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջև մի նոր ոսկե կամուրջ է հաստատում, որ պիտի լինի մեր ժողովրդի և Օրթոդոքս Եկեղեցու համար բարիքների մի աղբյուր: Ես հիշում եմ, թե մի տարի առաջ, երբ ես Բարդուղիմեոս Ա-ի մոտ եղա Կոստանդնուպոլսում, Նորին Սրբությունը ցույց տվեց նույն այդ եղբայրական սերը: Ես ողջունում եմ նաև այս պատմակերտ այցելությունը մեր Հայրենիք»:

Այնուհետև Բարդուղիմեոս Ա Պատրիարքն ընթերցեց իր ուղերձը, որում ի մասնավորի ասաց.

«Գտնվելով Հայաստան աշխարհի օրհնյալ հողի վրա, մենք շատ մեծ ուրախություն ենք զգում:

Մենք ժամանել ենք Տիեզերական Պատրիարքությունից իբրև խաղաղության, սիրո և մեծարանքի պատգամավորներ:

Սիրելի Զերդ Սրբություն Գարեգին Ա Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Զեզ և Զեր Միաբանության պատվելի անդամների, այս օրհնյալ երկրի ղեկավարների և Զեր հարգարժան ու բազմատաղանդ հայ ժողովրդի հետ շփվելու հնարավորությունը մեզ մեծ ուրախություն և հրճվանք է պատճառում: Մենք սրտանց ողջունում ենք անվեհեր հայ ժողովրդին՝ Զեր շատ տառապյալ, սակայն հերոսական ու սխրագործ հայ ժողովրդին: Մենք օրհնում ենք նրան և ի խորոց սրտի շնորհավորում հայ ժողովրդին իր բազում և զանազան շոշափելի մշակութային և հոգևոր նվաճումների առիթով:

Մենք ջերմորեն ողջունում ենք հարգարժան կառավարությանը և այս վսեմ երկրի բոլոր ղեկավարներին:

Մեր ողջ էությամբ մեր շնորհակալությունն ենք հայտնում ջերմ և սրտառուչ ընդունելության համար, որ ցուցաբերվեց իմ և իմ շքախմբի նկատմամբ:

Մենք աղոթում ենք Աստծուն, որ նա հաջողությամբ պսակի Զեր բոլոր ձեռնարկումները՝ ուղղված Հայաստանի և հայ ժողովրդի բարեկեցությանը, որոնց մենք սիրում ենք:

Թող Քրիստոսի օրհնանքը, ողորմությունը, շնորհը և խաղաղությունը իջնի այս երկրի և նրա ժողովրդի վրա»:

***

Այնուհետև Տիեզերական Պատրիարքը պատասխանեց լրագրողների հարցերին:

ՀԱՐՑ.- Զերդ Սրբություն, վերջերս Հայաստան այցելեց Հունաստանի պաշտպանության նախարարը, իսկ այսօր՝ Դուք: Ինչո՞վ է պայմանավորված Հունաստանի հետաքրքրությունը Հայաստանի նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ես, իբրև Տիեզերական Պատրիարք, չեմ միջամտում քաղաքականությանը: Սակայն միշտ ուրախությամբ եմ հետևում այն

ջերմ հարաբերություններին, որոնք կարգանում են երկու պետությունների և ժողովուրդների միջև:

Հունաստանի սերը Հայաստանի նկատմամբ պարզ է և հասկանալի, որովհետև խոսքը վերաբերում է երկու քրիստոնյա ժողովուրդներին, ժողովուրդներ, որոնք ունեն պատմականորեն խորը և ընդհանուր արմատներ:

Մաղթում ենք, որ այս փոխըմբռնման հարաբերությունները շարունակվեն Հունաստանի և Հայաստանի, Հայաստանի և Թուրքիայի, ինչպես նաև այս տարածաշրջանի բոլոր երկրների միջև՝ հանուն երկրագնդի խաղաղության:

ՀԱՐՑ.- Ինչպիսի՞ն է Հույն Եկեղեցու դերը էկումենիկ շարժման մեջ և ինչպե՞ս եք գնահատում Վրաց Եկեղեցու էկումենիկ շարժումից դուրս գալու հանգամանքը:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Մենք անչափ ցավում ենք Վրաց Եկեղեցու հապճեպ որոշման համար: Եկեղեցիների Համաշխարհային խորհրդում այլ բան չի լինում, քան երկխոսություն: Միմյանց հասկանալու մեկ այլ տարբերակ էլ կա. գնալ առճակատման: Բայց Եկեղեցիների Համաշխարհային խորհուրդը պարզ և հասկանալի է, որ մերժում է երկրորդ տարբերակը: Տիեզերական Պատրիարքությունը և մյուս Եկեղեցիները միայն խաղաղ երկխոսության կողմնակից են:

Վերադառնալով հարցի երկրորդ մասին, մաղթում եմ, որ շուտ հարթվեն Վրաց Եկեղեցու հետ կապված խնդիրները:

ՀԱՐՑ.- Այս երկխոսությունների ընթացքում հնարավո՞ր է արդյոք ակնկալել քրիստոնյա Եկեղեցիների միացում:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ո՛չ անմիջապես, ո՛չ վաղը, սակայն մենք աշխատում ենք այդ ուղղությամբ և հույս ունենք, որ գալու է այդ նշանավոր ու ցանկալի օրը: Մենք՝ մարդիկս, պետք է անենք հնարավորն այդ ուղղությամբ, մնացյալն Աստծու գործն է:

Ճեպակրույցն ավարտվեց Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի՝ լրագրողներին ուղղված հակիրճ խոսքով, որով Նորին Սրբությունը շեշտեց Հույն Ուղղափառ Եկեղեցու հոգևոր առաջնորդի այցելության բոլոր օրերի հանգամանալից լուսաբանման կարևորությունը մեր մամուլում:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Ճեպակրույցից հետո, ավտոմեքենաների շարասյունն առաջնորդվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այստեղ Հույն Ուղղափառ Եկեղեցու պաշտոնական պատվիրակությանը, հոգևոր առաջնորդի գլխավորությամբ, դիմավորեցին կանգերի ղողանջներով:

Թափորի ուղեկցությամբ և «Հրաշափառ»-ով մուտք գործելով Մայր Տաճար, երկու Եկեղեցիների Քահանայապետերը Իջման Սուրբ Սեղանի առջև կանոնական աղոթք առաքեցին առ Բարձրյալը: Ապա «Ուրախ լեր» շարականի երգեցողությամբ բարձրանալով Ավագ խորան, փոխանակեցին բարեողջույնի ուղերձներ:

Կարևորելով Տիեզերական Պատրիարքի պատմական նշանակություն ունեցող այցելության նպատակը, Գարեգին Ս Սմենայն Հայոց Կաթողիկոսն ասաց.

«Փառք և գոհություն Քեզ, Հայր երկնաւոր, որ տուիր մեր բոլորիս այս հոգելից պահը եղբայրութեան և միասնութեան, դարաշունչ այս տաճարում Քո Միածին Որդու՝ Յիսուս Քրիստոսի ձեռքով սրբահիմնուած, այս Մայր Տաճարի կամարների ներքոյ ուր 1700 տարիներից ի վեր աղօթքը միախառնուած է այս սրբաճաճանչ քարերին:

Եղբայրութեան և միասնութեան ապրումը այսօր նոր շեշտ ու երանգ է զգենում, երբ այդ ապրումի զօրութեան միջից Մենք ողջագուրում ենք Քեզ՝ Մեր սիրեցեալ Եղբօրն ի Քրիստոս, Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքիդ՝ Նորին Սրբութիւն Բարթողիմէոս Ա-ին, Քեզի ընկերացող հոգևորական և աշխարհական անդամներից բաղկացեալ պատուիրակութեան հետ միասին:

Հայ ժողովրդի այս քրիստոնէական ծննդավայրին՝ հայկական Բեթղեհէմում Մենք և Մեր երջանկայիշատակ նախորդները յաճախ ընդունել ենք եկեղեցական բարձրաստիճան անձնաւորութիւններ և եկեղեցիների պետեր: Բայց առաջին անգամն է մեր պատմութեան մէջ որ Հայաստանի այդ սրբազնասուրբ վեհավայրում և Հայց. Եկեղեցու հոգևոր կենտրոնում Մենք ողջագուրում ենք Կ. Պոլսոյ դարաւոր և հռչակաւոր Աթոռի Գահակալը՝ Տիեզերական Պատրիարքը, յանձին Ձերդ Սրբութեան:

Մենք զգում ենք որ Ձեր այցելութեամբ մեր հասարակաց պատմութեան մէջ արձանագրւում է մի նոր քայլ Քրիստոսի Սուրբ Աւետարանի և Ուղղափառ հաւատքի հանդէպ Մեր հաւատարմութեան և ծառայութեան միասնական առաքելութեանը մէջ:

Մենք քաղցրօրէն յիշում ենք Մեր անցեալ տարուայ այցելութիւնը Ձերդ Սրբութեան և Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքութեան: Մեր երկու եկեղեցիների փոխյարաբերութիւնների սերտացման աքանչելի պահեր եղան մեր հանդիպումները և խօսակցութիւնները, Իսթանպուլում Ցեների պատրիարքարանում: Ողջունեցինք Ձեր սիրալիր կապերը Կ. Պոլսոյ մեր Հայոց Պատրիարքութեան և Թուրքիոյ մեր սիրեցեալ հայ համայնքին հետ:

Այսօր, Ձեր այցելութիւնն ի Հայաստան և ի Ս. Էջմիածին, առաջինը իր տեսակին մէջ, մի նոր էջ է բացում քրիստոնէական եղբայրութեան գործնական արտայայտութեան տեսակէտից: Մեր հայ ժողովուրդը Ձեր անձի միջից ողջունում է Ցոյն Ուղղափառ եկեղեցու համայն ժողովուրդը, որ վայելում է Ձեր հայրախնամ հոգածութիւնն ու հոգևոր առաջնորդութիւնը:

Մեր երկիրը, Ս. Գրական Այրարատի երկնամերձ բարձունքի նայուածքի տակ, թևակոխել է մի նոր շրջան իր դարաւոր պատմութեանը մէջ: Երկար դարեր օտար լուծի ու բռնական վարչակարգերի տակ ապրած մեր Հայոց աշխարհը ներկայումս, Ի. դարի այս վերջալոյսին, ազատ ու անկախ սեփական Հանրապետութեամբ է օժտուած: Նոր դարաշրջան է բացուել այս պատմական հողի վրայ, ուր քրիստոնէութիւնը ճանաչուեց որպէս պետական կրօն 1700 տարիներ առաջ հենց այս սրբավայրում, որտեղ այժմ Մենք միասնաբար աղօթք ենք ընծայում Աստուծոյ: Դարեր եկան, դարեր գնացին, թագաւորութիւններ ստեղծուեցին և թագաւորութիւններ կործանուեցին, բայց հազար փառք Աստուծոյ, որ քրիստոնէական հաւատքը, հայոց լեզուն, գիրն ու մշակոյթը մնացին անխորտակ և անայլայլ: Նրանք էին որ մեր հայրենի հողի վրայ մեր ժողովրդի կեանքը արժևորեցին և յաւերժացրին,

Աստուծոյ օրհնութեամբ և մեր ժողովրդի անբեկանելի հաւատարմութեան ու տոկունութեան զօրութեամբը:

Մեր Ս. Եկեղեցին այժմ, ի դարի վերջաւորութեան, ազատութեան և անկախութեան այս նոր պայմաններում, մտել է առաքելութեան մի նոր ճանապարհի մէջ – վերանորոգել, խորացնել, տարածել քրիստոնէական հաւատքը ժողովրդի կեանքի բնագաւառներում: Վերանորոգութեան առաքելութիւն բառերով կարելի է բնորոշել մեր Եկեղեցու այժմեան շրջանի գործունէութեան ուղին: Եօթանասուն տարիների հակակրօնական պայքարի հետքերը ջնջել, յառաջ եկած ընդարմութիւնը բարեփոխելը դիւրին գործ չէ:

Ահա այստեղ է ուր մեր քոյր Եկեղեցիների զօրակցութիւնը Մեզ համար մեծ արժէք ունի: Էկիւմենական ոգին պէտք է վերածուի գործի, փոխադարձ սիրոյ գործնական արտայայտութեամբ, փոխադարձ զօրացման կամքով ու հեռանկարով և նոյն Քրիստոսի հաւատարմօրէն ծառայելու անշեղելի առաջադրութեամբ:

Սիրեցեալ Եղբայր ի Քրիստոս,

Ձերդ Սրբութեան պատմակերտ այցելութիւնը Մեզ համար քրիստոնէական սիրոյ և եղբայրութեան պերճախօս մի վկայութիւն է, որ այնքան սիրով և ազնուութեամբ էք ընծայում Ձեզ ընկերացող Մեր հոգևոր և աշխարհական եղբայրների հետ միասին, այնքան ջերմ բարեկամական զգացումներով և Քրիստոսի Եկեղեցու միութիւնը ամրացնելու նուիրական նպատակով և հեռանկարով:

Մեր սրտեռանդ աղօթքն է որ Աստուած Իր երկնային օրհնութեամբ պտղաբեր դարձնի այս առաջին այցելութիւնը և նորանոր ու բազմաբեղուն արդիւնքներով «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր» (Մարկ. Դ.) պսակի մեր միասնական գործունէութիւնը իր փառքին և Եկեղեցու պայծառութեան ու մարդկութեան բարիքին համար»:

Դիմելով իր հոգևոր եղբայրներին, ինչպես նաև ներկա հավատավոր հայորդիներին, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն առանձնակի նշեց.

«Ձերդ Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, դերաշնորհ և հոգեշնորհ հայրեր,

Այսօր մեզ համար բացառիկ մի առիթ է ընձեռնվել՝ այցելել Սուրբ Էջմիածին, այն վայրը, ուր անձամբ իջավ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Այս եկեղեցին ձեր հոգևոր և աշխարհիկ կենտրոնն է և, Ձերդ Սրբություն, Դուք Ձեր կենդանի վկայությամբ պետք է աշխատեք առաջ տանել մեր հոգևոր կյանքը:

Թող Հիսուս Քրիստոսի կյանքը փառավորվի բոլոր դարերում: Թող Աստծու անունը փառաբանվի և օրհնվի աշխարհի չորս ծագերում: Մշտապես Աստծու Խաչը և սերը թող տարածվեն Հայոց աշխարհի բոլոր բարձունքներում:

Ձերդ Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, սիրեցյալ եղբայր, մենք նույնպես ստանձնել ենք մի պարտականություն՝ լինելու վկաները և տարածողները Աստծու պատգամների: Մենք հավատում և խոստովանում ենք, որ Աստծու Միածին Որդին ծնվեց ժամանակներից ու դարերից առաջ: Օգոստոս կայսեր գահակալության շրջանում նա ծնվեց և մարդկային կերպարանք առավ Սուրբ Հոգով և Աստվածային լույսով: Նա աշխարհ եկավ որպես մի անձ՝ առանց այլայլության ու փոփոխության:

ՀՈԳՆՈՏ ՀԵՄՈ ՓՏԻՄՈ ԽԱ-«ԿՈՓՈՇՈՒՄԻՆ» ԿՑ ՌԻՍՄԱԽՈՒՄԻՆ

ԳԱՍՊ ԿԵՂԱՐՈՒՄԱՅԻ ՄԵԾԱՄԱՍ Ի ԳԱՍԵՎԱՆԵՆԻՄԻՆԻ

Զերդ Սրբություն, մենք ուրախ ենք և հրճվում ենք, որ այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ղեկավարում եք Դուք՝ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս այս Սուրբ Եկեղեցու:

Զերդ Սրբություն, Դուք, որ Աստծու շնորհներով բեղուն եք Ձեր հետաքրքրությամբ, բայց նաև որպես խաղաղարար և համատեղող, միացնող անձնավորություն եք հանդես գալիս՝ նվազեցնելով այն երկպառակությունները, որոնք առկա են Եկեղեցիների միջև: Ինչպես գիտեք, անցյալից ժառանգված բաժանումներ կան, որոնք մենք պետք է հաղթահարենք: Բարեբախտաբար, խորը ուսումնասիրությունները բացահայտել են այն տարբերությունները, որոնք գոյություն ունեն: Դրանք ի հայտ են եկել միմյանց ոչ ճիշտ հասկանալու պատճառով, հարաբերությունների խզումով, ինչպես նաև քաղաքական տարբեր պատճառներով, որոնք, սակայն, կարելի է հաղթահարել համատեղ աշխատանքով: Մենք արդեն թևակոխում ենք երրորդ հազարամյակ, և մեզ թվում է, թե այն պետք է լինի հոգու վերանորոգության մի շրջան: Թող միասնականություն և շնորհներ բաշխող Աստված Իր շնորհները բաշխի ամենքին, ովքեր լսում են Իր անունը: Ահա այս ամենի վրա ենք դրել մեր հույսը, որի համար էլ, որպես եղբայրներ, ցնծում և ուրախանում ենք:

Մենք այստեղ ենք եկել Քրիստոսով՝ որպես Հիսուսի ծառաներ և Նրան սիրողներ: Մենք այստեղ ենք եկել ոչ միայնակ, այլ մեզ ընկերակցում են բարձրաստիճան հոգևորականներն ու չքախումբը: Եկել ենք ներկայանալու ոչ միայն Զերդ Սրբությանը, այլև ողջ հայ ժողովրդին: Մենք գալիս ենք այստեղ այն համոզումով, թե ժամանակի ընթացքում կարողանալու ենք դիմագրավել և վերացնել առկա բոլոր խոչընդոտները: Թեև մեր երկու քույր եկեղեցիները միմյանց նկատմամբ ջերմ սեր են տածում, սակայն երկկողմանի լիակատար հաղորդակցությունը բացակայում է: Այս դարավոր խոչընդոտները մեր անձնական ուժերով չենք կարող ամբողջությամբ հաղթահարել, վերացնել, ուստի մենք պետք է դիմենք մեր Սուրբ Եկեղեցու գլուխ և Առաջնորդ Հիսուս Քրիստոսին, որպեսզի օգնի մեզ՝ դիմագրավելու այս դժվարությունները:

Զերդ Սրբություն, այն սերը և ուշադրությունը, որ Դուք ցուցաբերել եք մեր անձի և չքախմբի նկատմամբ, ինչպես նաև սիրեցյալ ժողովրդի ներկայությունն այստեղ պարտավորեցնող է: Մենք աղոթում ենք ձեր բոլորի համար, որպեսզի Աստված Իր շնորհները բաշխի ամենքիդ, ինչպես նաև Ձեր երկրին: Մենք աղոթում ենք առ Աստված, նաև հայցում Ձեր Եկեղեցու բոլոր Սրբերի բարեխոսությունը՝ Բարդուղիմեոս Առաքյալի գլխավորությամբ, ում նկատմամբ մենք մեծ սեր, խոնարհություն ու պաշտամունք ենք տածում: Վստահ ենք, որ նրանց բարեխոսության շնորհիվ պիտի կարողանանք հասնել այն երջանիկ օրվան, երբ մեր երկու Եկեղեցիները կդտնվեն փոխհաղորդության մեջ»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Հավարտ փոխանակված բարեողջույնի խոսքերի, Հույն Ուղղափառ Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողությամբ և թափորով առաջնորդվեց դեպի Վեհարան:

Գահասրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում ներկայացվեցին երկու Եկեղեցիների պատվիրակությունների անդամները, փոխանակվեցին մտերմիկ խոսքեր:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին, ի պատիվ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի, Վեհարանի հյուրասրահում Ամենայն Հայոց Հայրապետի կողմից տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին նաև բարձրաստիճան հոգևորականները, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ:

Ճաշկերույթի ընթացքում փոխանակվեցին բարեողջույնի խոսքեր:

Ապա, կարճատև հանգստի համար, բարձրաստիճան հյուրերը մեկնեցին Երևան՝ հյուրերի ընդունելությունների կառավարական տուն:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՈՏ

Այցելության առաջին օրը, ժամը 18.30-ին, Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ին և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընդունեց ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը:

Փոխանցելով Հույն Եկեղեցու Սուրբ Սինոդի լավագույն բարեմաղթանքներն ու բարեողջույնները, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ը նշեց, որ Հայաստանն այսօր ապրում է պատմական դժվարին մի ժամանակաշրջան: Սակայն ինքը վստահ է, որ Հայաստանի Հանրապետության նախագահը, որպես հոգևոր արժեքներին մոտ կանգնած մարդ, կկարողանա հաղթահարել դժվարությունները:

Իր հերթին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նշեց, որ Տիեզերական Պատրիարքի այցը պատմական նշանակություն ունի: Որպես պատմաբան, իր համար չափազանց հուզիչ պահ է՝ ընդունել Հայաստանի վերանկախացյալ Հանրապետություն այցելած առաջին Տիեզերական Պատրիարքին:

Հանրապետության նախագահը նաև ընդգծեց Եկեղեցու կարևոր դերն անցումային շրջանում հոգևոր ու բարոյական արժեքների պահպանման գործում:

Նորին Սուրբ Օծություն Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը կարևորեց ողջ աշխարհում Հայ և Հույն Եկեղեցիների, ժողովուրդների ու համայնքների միջև համագործակցությունը և նշեց, որ անհատի, հասարակության ու ազգի ազատությունը, անկախությունը հիմնարար քրիստոնեական արժեքներ են, որոնք ընդհանուր են հայ և հույն ժողովուրդների համար:

Վերջում երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ:

«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ԲԱՐՁՈՒՆՔԻՑ

Այստեղից երկու Եկեղեցիների պաշտոնական պատվիրակություններն ուղղվեցին դեպի «Մայր Հայաստան» կոթողի բարձունք:

Դիտելով քաղաքամայր Երևանը և վայելվելով բիբլիական Արարատի անմեկնելի գեղեցկությամբ ու վեհությամբ, Նորին Սրբություն

ՏԳԷ ՎԵՐԻԿՈՐԻՈՅ ՂՈԵՎԻՍՏՑԵՆՐՈՒՄՆԷ ՄԻՍԿԻՎՈՒՄԷ

Բարդուղիմեոս Ա-ը և Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը մեկ հետ կիսեցին իրենց խոհերը:

Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն այսպես մեկնեց իր ապրումները.

«Սա սրբազան լեռ է բոլոր հավատացյալների համար: Սակայն այն հատկապես սրբազան է հայերի և Հայաստանի համար, որովհետև այս պատմական երկրի ողջ հոգևոր կյանքը զարգացել է Արարատի հովանու ներքո: Ես ցանկանում եմ, որ դուք միշտ ունենաք պաշտպանությունը ձեր նախահայրերի և ապրեք ոչ միայն Արարատի հովանու ներքո, այլ նաև Տիրոջ խաչի հովանու և Նրա Հարության լույսի ներքո»:

Արտահայտելով իր զգացումները, Ամենայն Հայոց Հայրապետն ասաց.

«Միանալով իմ եղբոր՝ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին, ես էլ ասում եմ՝ դա բոլոր հավատացողներին համար սրբազան լեռ է, բայց հայու համար պաշտելի լեռ է, որովհետև հավերժության խորհրդանիշ է և ոչ թե միայն քրիստոնյաների համար, այլ նաև բոլոր նրանց համար, ովքեր հավատում են Աստծու ուժին: Լեռը Աստուծո հետ հաղորդության խորհրդանիշ է: Աստված մեր եղբորը երկար կյանք տա, իր աղոթքը լսի և Արարատի նայվածքը միշտ հավերժության լույսը ծագեցնի մեր աշխարհին և մեր ժողովրդին»:

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՀԱՄԵՐԳԱՍՐԱՀՈՒՄ

Նույն օրը, երեկոյան ժամը 19.30-ին, Հայ և Հույն Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, Գարեգին Ա Կաթողիկոսի գլխավորությամբ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում ունկնդրեցին Երևանի քաղաքապետարանի սիմֆոնիկ նվագախմբի և երգչախմբի համերգը՝ մաեստրո Լորիս Ճգնավորյանի ղեկավարությամբ:

Ի պատիվ Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի տրված համերգին ներկա էին նաև Մայր Աթոռի միաբաններ, պետական բարձրաստիճան այրեր:

Համերգը բացվեց Տերունական աղոթքով: Ապա հնչեցին հոգևոր երգեր և դասական ստեղծագործություններ:

Վերջում ներկաներին իրենց հայրապետական պատգամը հղեցին երկու Եկեղեցիների հոգևոր պետերը:

Իր խոսքում կարևորելով Տիեզերական Պատրիարքի պատմական այցելությունը Հայաստան, Նորին Սուրբ Օծությունն ի մասնավորի ասաց.

«Սիրելի ունկնդիրներ, հայ ժողովրդի եկեղեցասեր և մշակութասեր հայրենակից եղբայրներ և քույրեր.

Ես զգում եմ և վստահ եմ, որ դուք էլ զգում եք, և այս գիշեր ձեր սրտերում, ձեր հոգիներում գրեք մի տող. այս օրը պատմական մի օր է, աննախընթաց հայոց դարավոր պատմության մեջ: Առաջին անգամն է մեր քրիստոնեական պատմության առավել քան 1700 տարիների մեջ, որ Կոստանդնուպոլսո մայրաքաղաքի Հունաց Ուղղափառ եկեղեցու պետը, Տիեզերական Պատրիարք անվամբ ճանաչված, գտնվում է մեր հայրենի հողի

վրա, Ս. Էջմիածնում և քաղաքամայր Երևանում: Սա աննախընթաց օր է, և ձեր երեխաներին պատմեք, որ 1997 թվականի հուլիսի 1-ը այն օրն է, որ ես հռչակում եմ մեր հայոց պատմության մեջ որպես Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքության օր Հայաստանում:

Այս առավոտ նորին Սրբությունը գտնվեց մեր ազգի ծննդավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, խոնարհվեց այն հողին, որտեղ Քրիստոսի ձեռքն է դպել, և Հայ Եկեղեցին դրանից է ծնվել: Գտնվեց մեր եպիսկոպոսական դասի հետ միասին, եղավ մեր նախագահի մոտ և այսօր երեկոյան ահավասիկ այստեղ է՝ ունկնդրելու մեր հոգու ձայներին, երաժշտական արվեստով կերպարանափոխված և հոգեխոս, խորասույզ ձայներին, պատմությունից, մեր հայրերի հոգիներից բխած: Եվ մենք ի՞նչ ունենք Հայաստանում, ի՞նչ ունենք իբրև հայ ժողովուրդ նրան ընծայելու. ո՛չ ոսկու հանք, որ ոսկի տանք, ո՛չ արծաթ, որ արծաթ տանք, ո՛չ վառելանյութ ունենք, որ վառելանյութ տանք: Մենք միայն ու միայն երգ ունենք, նվագ, խոր հավատք ունենք և աղոթք: Աղոթք ընծայեցինք Սուրբ Էջմիածնում, հավատքը կենդանացվեց մեր մեջ և այսօր երգ ու նվագ, սքանչելի այս նվիրյալ մեր արվեստագետների կողմից, Լորիս Ճգնավորյանի գլխավորությամբ: Ապրե՛ք բոլորդ, որ այսպես ընծայում եք ընտրելագույնը նվերներից ընտրելագույն հյուրերին, ինչպես արեցիք սրանից առաջ, այսօր էլ ահավասիկ ընծայում եք Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքին:

Մեր պատմության էջերը բացեք. Բյուզանդիոն, Բյուզանդական կայսրություն: Մեր եղբայրը Բյուզանդիոն քաղաքից է գալիս և տեսեք, թե ի՞նչ հավատարմությամբ է Կոստանդնուպոլսո Աթոռը՝ Հույն Ուղղափառ Եկեղեցին պահել իր հավատքը: Կայսրության օրերը գնացել են, բայց հոգևոր կայսրությունը մնացել է, հոգևոր տարածումը Աստծու սիրույն իրենց Եկեղեցիներից»:

Արտահայտելով իր գոհունակությունն ու հոգեկան բավարարվածությունն այդ հոգեպարար համերգից, Տիեզերական Պատրիարքն ասաց.

«Ձերդ Սրբություն, սիրելի եղբայր ի Քրիստոս Գարեգին Ա Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, հարգարժան-ներկայացուցիչներ պետական իշխանությունների, սիրելի և օրհնյալ ժողովուրդ Քրիստոսի.

Շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, Ձերդ Սրբություն, այն պատվի համար, որ այժմ մատուցում եք մեզ՝ այս եկեղեցական երաժշտության ձևով: Երաժշտությունը, ինչպես հայտնի է, արտահայտության և հաղորդակցության միջոց է: Ունի այն առավելությունները, որ այն հասկանալու համար լեզվական իմացությունների անհրաժեշտությունը չկա և չի ենթադրում բանականությունը իբրև հաղորդակցություն, թեև այն բանականություն ունի, որն ուղղված է առավելաբար մեր հոգեկան այլ ընկալող երևույթներին: Բարեբախտաբար մենք՝ արևելցիներս, պետք եղածից ավելի տեղ չենք տվել բանականությանը և, հետևաբար, կարողանում ենք հաղորդակցվել և ճանաչել աշխարհը, ոչ միայն և ոչ հիմնականում տրամաբանության և մտքի միջոցով, այլև մեր հոգեկան և մշակութային այլ զգացմունքների միջոցով, որոնցում առաջնակարգ տեղ ունի հավատքը և զգացմունքը: Անշուշտ, տարօրինակ է այս ասվածը արևմուտքցիների համար: Օրինակի համար այն, որ սերը իմացության մի

երևույթ է, և այն, որ մենք ունենք դրա փորձառությունը և կարողանում ենք մերժել այն երևույթը, թե որոշ մարդիկ տրամաբանական իմացություններից բացի, ուրիշ ոչինչ չեն ընդունում:

Երաժշտությունը կարող է շատ բան արտահայտել և կարող է փոխադարձել և կարող է ներազդել այն ունկնդրողների վրա: Եթե երաժշտությունը ներդաշնակ է, Պյութագորասի և Պլատոնի ասածների համաձայն, ապա այն աստվածային պարգև է, քանզի ազնվացնում է հոգին, կերտում, ազնվացնում է և մեր հոգիները բարձրացնում դեպի երկինք: Այս, իմիջիայլոց, նկատի ունի նաև Պողոս առաքյալը, երբ խորհուրդ է տալիս Եփեսացիներին, որ, լցված Սուրբ Հոգով, միմյանց սաղմոսներ և հիմներ ասեն, հոգևոր երգեր երգեն՝ օրհնելով և սաղմոսելով իրենց ամբողջ սրտով Տիրոջը: Նույնը նաև ուղղված է Կողոսացիներին, որ ուսուցանեն, խորհուրդ տան նրանց, որպեսզի նրանք սաղմոսներով և հոգևոր երգերով օրհնաբանեն Տիրոջը իրենց ամբողջ սրտով: Վստահաբար նաև, ինչպես նշում է Ս. Հովհան Ոսկեբերանը, որ վատ երաժշտությունը մարդու հոգու մեջ ներարկվում է արբեցության նման և ստեղծում համապատասխան արբեցության երևույթներ, և կամ ինչպես արբեցությունը մթացնում է մարդու միտքը, նույնպես էլ վատ երաժշտությունը արգելակում է մարդու մտայնությունը, միտքը, փակում մտքի ողջամտությունը և ստեղծում հոռի մտքեր: Այդ պատճառով էլ Եկեղեցին չի թույլատրում ամեն տեսակի երաժշտություն և եկեղեցական ծիսակատարության համար ընտրել է ութ ձայների ծանոթ լադերը, և այդ պատճառով է, որ ներշնչյալ չարականագիրները երբ ստեղծել են բազմաթիվ եկեղեցական շարականներ և դանձեր, նրանց միջոցով արտահայտել են իրենց ժողովրդի սիրո և հավատքի արտահայտությունը՝ ուղղված առ Աստված:

Եկեղեցական երաժշտության միջոցով և նրան տրված այս կարևորությունը ընդգծված է եղել և՛ ձեզ մոտ՝ Հայերիդ, և՛ մեզ մոտ՝ Հույներիս: Եվ մենք դրանով մշակել ենք հարգանք դեպի մեր ավանդությունը: Անշուշտ նկատում ենք, որ մեր եկեղեցական ծառայության ընթացքին, որ շատ ժամանակ իսկական ասված աղոթքը և երաժշտությունը այն չէ, որ կատարողը կատարում է ոչ թե ներկաներին ի տեսություն, այլ այն, որ նա մոռանում է ներկաներին և ուղղակի իր աղոթքը ուղղում է Աստծուն, և այդ ժամանակ է, որ նրա երգը նաև ներգործում է մարդկանց հոգիների վրա: Հետևաբար եկեղեցական երաժշտության լավ կատարումը միայն երաժշտական նոտաների և հնչյունների ճիշտ արտաբերումը չէ, այլ նաև այն համապատասխան գույնից, որով արտահայտվում է ամեն մի աղոթող, որով մենք փառաբանում ենք կամ գոհություն մատուցում և կամ խնդրում Աստծուց: Դա շատ կարևոր է, և այդ են նկատի ունեցել Տրուլլոյի ժողովի Սուրբ Հայրերը իրենց 75-րդ կանոնով, որում ասել են, որ պետք է սաղմոսել ամբողջ համոզմունքով և ամբողջ նվիրումով, մեր ամբողջ հոգով առ Աստված:

Իմ և ինձ ուղեկցողների ուրախությունը շատ մեծ է, քանզի մենք այսօր հնարավորություն ունեցանք լսելու երաժշտությունը մի ժողովրդի, որ խորապես բարեպաշտ է, հազարամյակներ քրիստոնյա և մի երաժշտություն, որ կատարվեց նույնքան բարեպաշտ երգչախմբի և նվագախմբի կատարմամբ: Մենք հարստացանք այստեղ ոչ միայն այս երաժշտության ընկալումով, այլև այն հոգեկան արտահայտությունների փոխանցմամբ:

Մենք ցանկանում ենք ողջունել և շնորհակալություն հայտնել խմբավարին և ողջ երաժշտախմբին այս հոգեշահ համերգի համար և բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են բերել այս համերգին: Շնորհակալություն եմ ուզում հայտնել ձեզ՝ ներկաներիդ: Ես հոգեպես ավելի մոտ եմ ձեզ զգում: Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը իջնի ձեր վրա, ամեն:

Շնորհակալություն նաև իմ եղբորը ի Քրիստոս Նորին Սրբություն Գարեգին Ա-ին: Նա հարմար նկատեց ժամանակ հատկացնելու այսօրվա այս գեղեցիկ հանդիպման համար:

Խմբավարի միջոցով մեր շնորհակալությունն ենք հայտնում նաև բոլոր մասնակիցներին»:

Վերջում Տիեզերական Պատրիարքը, որպես գնահատանքի դրսևորում, խմբավար Լորիս Ճգնավորյանին հանձնեց հուշանվեր:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Այցելության երկրորդ օրը, հուլիսի 22-ին, առավոտյան ժամը 10.00-ին, Հույն Ուղղափառ Եկեղեցու պետ Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա-ին ընդունեց ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Բաբկեն Արարքցյանը:

Հոգևոր պետերին ընկերակցում էին երկու Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականները, Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակատար դեսպան Յակովոս Սպեցիոսը, պաշտոնատար այլ այրեր:

Ողջունելով հյուրերին, Ազգային Ժողովի նախագահը նշեց, որ անչափ կարևոր է քույր Եկեղեցիների պետերի կանոնավոր այցելությունները Հայաստան, որոնք, ինչպես և Տիեզերական Պատրիարքի այցը, ամրապնդում են մեր Եկեղեցիների, ժողովուրդների և պետությունների բարեկամությունը:

Բաբկեն Արարքցյանը տեղեկացրեց, որ խորհրդարանը հնարավորին չափ աջակցում է, որպեսզի ժողովուրդն ավելի կապվի ճշմարիտ հավատքի հետ՝ նշելով, որ իրապես անկախ և ժողովրդավարական պետություն կառուցելու գործում դժվար է թերագնահատել Եկեղեցու դերը. Եկեղեցի, որ իր պատմության ընթացքում հաճախ փոխարինել է հայ պետականությանը և իր նկարագրով խորապես ազգային է:

Թե՛ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի նախագահը, թե՛ Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ը, երկու Եկեղեցիների անմիջական կապերին զուգընթաց, կարևորեցին համագործակցությունը միջազգային ասպարեզում, մասնավորապես Ուղղափառ խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում:

Ջերմորեն արտահայտվելով Հայ Առաքելական Եկեղեցու և նրա հոգևոր պետ Գարեգին Ա Կաթողիկոսի մասին, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ը նշեց, որ երկու Եկեղեցիների սերտ համագործակցությունը Տիեզերական Պատրիարքարանի գործունեության նախապատվելի ուղղություններից է:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խորհրդանշական մեծ իմաստ

հաղորդեց Տիեզերական Պատրիարքի՝ Դ դարից ի վեր այս առաջին այցին, որը, ի թիվս մյուս քույր Եկեղեցիների հոգևոր առաջնորդների այցելությունների, մեկ անգամ ևս ապացուցում է, որ ունենք բարեկամ Եկեղեցիներ, պետություններ, ժողովուրդներ:

Հանդիպման ավարտին, որին ներկա էին ԱԺ փոխնախագահ Կարապետ Ռուբինյանը, մշտական հանձնաժողովների նախագահներ և պատգամավորներ, Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը գրառում կատարեցին ԱԺ–ի պատվավոր հյուրերի գրքում, ինչպես նաև փոխանակեցին հուշանվերներ:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄՈՏ

Քիչ ուշ, ժամը 10.45-ին, վարչապետ Ռուբերտ Քոչարյանն ընդունեց պաշտոնական հրավերով Հայաստանում գտնվող Հույն Ուղղափառ Եկեղեցու Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա–ին և Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա–ին:

Հանդիպմանը մասնակցում էին նաև Կառավարության աշխատակազմի ղեկավար, օպերատիվ հարցերի նախարար Շահեն Կարամանուկյանը, ՀՀ կրոնից գործող պետական կոմիտեի նախագահ Լևպար Սուքյանը, երկու Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ:

Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Պատրիարքը, վարչապետին հաղորդելով Հույն Ուղղափառ Եկեղեցու լավագույն մաղթանքներն ու ողջույնները, կարևորեց երկու Եկեղեցիների սերտ համագործակցությունն ու բարեկամությունը՝ ի նպաստ երկու ժողովուրդների բարօրության:

Վարչապետ Ռոբերտ Քոչարյանն իր հերթին ընդգծեց, որ սա հիրավի պատմական ու հիշարժան մի իրադարձություն է, քանզի առաջին անգամ է Հայաստան այցելում Հունաց Տիեզերական Պատրիարքը: Նա միաժամանակ վստահություն հայտնեց, որ հայ և հույն ժողովուրդների հոգևոր ու պատմական ընդհանրությունները մեծապես կնպաստեն երկու երկրների միջև համագործակցության առավել խորացմանն ու ամրապնդմանը:

Կարևորելով Եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում, Ռոբերտ Քոչարյանը շեշտեց, որ այն միշտ էլ նեցուկ է եղել պետությանը և այսօր ևս շարունակում է մնալ ողջ հայությանը միավորող ազգային կառույց: Վարչապետը նաև տեղեկացրեց, թե ինչ ծրագրերով են Հայոց Եկեղեցին և պետությունը պատրաստվում նշելու Հայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակելու 1700–ամյակը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Նույն օրը, ժամը 11.30-ին, երկու Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, հոգևոր առաջնորդների նախագահությամբ այցելեցին հայոց մտքի կաճառը՝ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա:

Ջերմորեն ողջունելով Բարդուղիմեոս Ս Տիեզերական Պատրիարքի այցելությունը Հայաստանի Հանրապետություն և հատկապես Գիտությունների Ազգային Ակադեմիա, Ակադեմիայի պրեզիդենտ Ֆրանսիս Սարգսյանն ասաց.

«Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարք, Վեհափառ Տեր, մեծարգո հյուրեր և բարեկամներ.

Ամբողջ սրտով ողջունում ենք Ձեր այցելությունը Հայաստան և Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիա: Դա համարում ենք պատմական երևույթ, մեզ համար մեծ պատիվ, հատկապես եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ դա մեր շուրջ 1700-ամյա եկեղեցական կապերի պատմության մեջ առաջին դեպքն է, որ Հունաց Եկեղեցու Պատրիարքն այցելում է Հայաստան: Մեր երկու ժողովուրդների կապերը, քաղաքական, մշակութային, եկեղեցական, դալիս են դարերի խորքից: Հայ և հույն ժողովուրդների առնչությունները ունեն երեք հազարամյակի պատմություն: Հին հունական մշակույթը բարերար ազդեցություն է ունեցել հայկական մշակույթի վրա: Մինչև Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից հայկական այբուբենի ստեղծումը, հունարեն լեզուն եղել է երվանդունիների և արտաշեսյանների արքունիքների պաշտոնական լեզուն: Քրիստոնեությունը է՛լ ավելի է կապել մեզ իրար հետ: Հայկական գրերի գյուտից հետո Սուրբ Գիրքը թարգմանվում է հայերեն հունարենից: Հայ երիտասարդները ուսումնառության են մեկնում հունական մշակույթի աշխարհահռչակ կենտրոնները և հարուստ գիտելիքներով վերադառնում Հայրենիք՝ նպաստելով հայ մշակույթի և պետության զարգացման գործին: Հունարենից թարգմանվում են ոչ միայն Ուղղափառ Եկեղեցու նշանավոր հայրերի գործերը, այլև անտիկ շրջանի փիլիսոփաների, հռետորների երկերը, բնական գիտություններին նվիրված բազմաթիվ գործեր: Հայաստանում զարգանում է պատմագրությունը, փիլիսոփայությունը, արվեստը: Այսօր, երբ վերականգնվել է Հայաստանի անկախ պետականությունը, մեր կապերը ստացել են նոր բնույթ: Պատահական չէ, որ հայ գիտնականներն այժմ գտնվում են շատ սերտ կապերի մեջ հույն գիտնականների հետ: Մեր գիտնականները մեծ հնարավորություններ են ունեցել և օգտվում են առկա կապերից: Մեր գիտնականները կատարում են իրենց աշխատանքները Հունաստանում, հույն գիտնականները՝ Հայաստանում: Մենք շատ բարեկամներ ունենք Հունաստանում: Սակայն ամենակարևորն այն է, որ մեր սրտերն են միասին:

Մեր Գիտությունների Ազգային Ակադեմիան, ինչպես նախկին Խորհրդային Միության Ակադեմիաները, կազմակերպված է յուրահատուկ կերպով: Ակադեմիայում գործում են երեք ուղղություններ՝ հասարակական գիտություններ, բնական գիտություններ և ճշգրիտ գիտություններ: Այդ գիտությունների սպասարեզում մենք ունենք մի քանի տասնյակ գիտահետազոտական ինստիտուտներ, կենտրոններ և այլ կազմակերպություններ: Չնայած անցումային շրջանի դժվարություններին, գիտնականներն աշխատում են համառորեն, կատարում են իրենց գործը մեր անկախ պետության համար և իրենց նպաստն են բերում համաշխարհային գիտության զարգացմանը: Գիտությունը ազգային սեփականություն չէ, այլ՝ միջազգային: Դա շատ լավ են հասկանում թե՛ հույն և թե՛ հայ

գիտնականները , ինչպես նաև քաջ գիտակցում են Եկեղեցու մեծ դերը մեր պետության մշակույթի պահպանման գործում: Միշտ էլ, բոլոր ժամանակներում Եկեղեցին սատար է եղել պետությանը, և այն, որ դուք շատ կարճ ժամանակով եք գտնվում Հայաստանում, կարողացաք ժամանակ գտնել և լինել մեր գիտության այս կաճառում, հենց այս փաստն է վկայում:

Ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, որ մեր Վեհափառ Հոր հրավերքն ընդունեցիք, ժամանակ գտաք այցելելու Հայաստան և մասնավորապես՝ մեր Գիտությունների Ազգային Ակադեմիա»:

Սպա նախագահ Ֆադեյ Սարգսյանը բարձրաստիճան հյուրերին ներկայացրեց Ազգային Ակադեմիայի գործունեության հիմնական երեք ուղղությունները, որոնք ծավալվում են հասարակական, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում, խոսեց գործող տասնյակ գիտահետազոտական հաստատությունների և կենտրոնների մասին:

Այնուհետև հունարեն լեզվով բարիգալստյան խոսք ասաց բյուզանդագետ, ակադեմիկոս Հրաչ Բարթիկյանը:

Շնորհակալություն հայտնելով ջերմ և սրտառուչ ընդունելության համար, Հունաց Տիեզերական Պատրիարքը կարևորեց Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիների այժմյան փոխհարաբերությունները՝ առանձնակի նշելով.

«Երանելագույն Կաթողիկոս և Ամենայն Հայոց Ծայրագույն Պատրիարք Տ.Տ. Գարեգին Ա,

Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի մեծարգո պարոն նախագահ,

Ակադեմիայի սիրելի անդամներ.

Ուրախ ենք, որ այսօր գտնվում ենք պատմական Հայաստանի բարձրագույն հաստատությունում՝ Գիտությունների Ակադեմիայում: Ճշմարիտ գիտությունը Աստծուց է տրվում՝ հոգին «իմաստութեան եւ հանճարոյ եւ գիտութեան» (ԵԼՔ, 31, 3) աստվածային է համարվում: Իմացությունն իր առաջին փուլում, այսինքն՝ դիտողականության կամ փորձնական ստուգման աստիճանում, հայերի կողմից ավելի լայն հասկացողությամբ, բնագիտություն է կոչվում: Այն կազմում է ուրույն գիտությունները: Գիտությունը մարդկանց տվեց Ինքը՝ Տերը, Իր հրաշքները փառավորելու համար (ՍԻՐԱՔ, 38, 6) : Այդ իմացությամբ և գիտությամբ մարդը մեծապես օգտվում է, եթե ի բարին այն գործադրի:

Մենք բարձր ենք գնահատում գիտնականների ավանդը՝ որպես անհատների, բայց և մտավոր հիմնարկությունների ավանդը, այդ թվում նաև բարեկամ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի: Քանզի կոլեկտիվ աշխատանքը հաճախ ավելի մեծ նվաճումներ է ձեռք բերում, քան անհատն իր գործադրած ջանքերով, և մենք մեծ ուրախությամբ տեղեկանում ենք, որ այս Ակադեմիայի կազմում կան բազմաթիվ առանձին հաստատություններ:

Շնորհավորում եմ Ձեզ՝ Ակադեմիայի պարոն նախագահ, ինչպես և ձեր Ակադեմիայի անդամներին այն եռանդի, խորագիտության և սիրո համար, որով դուք կատարում եք ձեր գործը, որ մեծ նպաստ է բերում ձեր հայրենիքին և համաշխարհային գիտական հանրությանը:

Ոգևորությունն ու եռանդը գիտական ճշմարտությունը հայտնաբերելու համար, թեև այն սովորաբար վերաբերում է մասնակի իմացություններին, գիտնականների պարտքն է, միաժամանակ նրանց հատկությունը՝ նպատակաուղղված իմացության գործնական օգտակարությանը:

Գիտնականները, ունենալով գիտական ճշմարտության և ճշգրտված իմացության տրամադրություն, այն է՝ «մահկանացուների համար անօտարելի սեփականությունը», պետք է հասկանան մեզ՝ որոնողներիս համընդհանուր ճշմարտությունը, որը պարունակում է ավելին, քան մասնակի ճշմարտությունները, բացահայտում գոյի պատճառները: Հայերի կողմից այն կոչվում է երկրորդ և հոգևոր իմացություն, ավելի հեռուն հայող, քան տեսողականը՝ իմացական ոգու ուժով և անմարմին ոգիների բնությամբ: Նա այդ ճշմարտությամբ է զբաղված և պահանջում է հոգևոր բնույթի այլ նախապայմաններ: Գիտենք և խոստովանում ենք, որ հոգևոր այդ իմացությունը գոյություն ունի, այն հասանելի է և ճշգրիտ, կա դեպի այն տանող ճանապարհը, բայց դժբախտաբար ձեռք չի բերվում միմիայն մտավոր ճանապարհով, փաստերի մտավոր ուսումնասիրությամբ, այն պահանջում է մարդկային գոյի իմացական այլ ուժեր ևս, նախ և առաջ աստվածային հայտնությամբ, որոնցով սովորական գիտությունը չի զբաղված, դեռ ավելին, չի էլ կարող զբաղվել:

Գիտնականները, հարկավ, ճիշտ են վարվում՝ սահմանափակվելով իրենց զբաղմունքի և հետազոտության կոնկրետ բնագավառով՝ մետաֆիզիկական ճշմարտությունների որոնումը համարելով գիտության կարողություններից վեր, մի բան, որին մենք՝ եկեղեցականներս և հավատքի ծառաներս, հասու ենք:

Հենց այդ պատճառով էլ մենք Ուղղափառ Եկեղեցում ամենևին չենք զգում մեր հավատքի գերբնական ճշմարտությունը որևէ գիտության որևէ ձեռքբերումից վիրավորված, քանի որ մեր ճշմարտությունը գիտության բնագավառից դուրս է գտնվում և շարժվում է այլ ոլորտներում: Քրիստոնեական և գիտական ճշմարտության առերևույթ ընդհարումը սուր պրոբլեմ դարձավ գլխավորապես Արևմուտքում, որտեղ քրիստոնեական ճշմարտությունը մեծապես պարզեցված էր, որով և դարձավ ամեն տեսակի գիտական քննադատության առարկա:

Մենք Ուղղափառ Արևելքում ընդունում ենք, որ իր գիտության անունից խոսող գիտնականը, իր գիտության իմացական առարկայի սահմաններում, իրոք մեծ օգուտ է բերում, սակայն, դրանից դուրս դալով և խոսելով գերբնական թեմաների շուրջ, նա հանդես է գալիս որպես հասարակ, հատուկ հեղինակություններից զուրկ մարդ, ում թեպետև հարգում ենք, ինչ էլ նա պաշտպանի, այդուհանդերձ նրա սեփական, իր գիտության առարկայից դուրս եղած տեսակետների մասին դատում ենք մեր հոգևոր «երկրորդ» իմացության հիման վրա:

Արդ, երբ խոսքը հասել է այս կետին, պարտավոր ենք, պարզապես մեր մտքերը լրիվ արտահայտելու համար, նշել, որ գոյություն ունի իմացության և երրորդ աստիճան, «ավելի անծանոթ և իմացությունից վեր», որին «Հոգին ընդունում է իր մեջ աննյութականորեն, որպես պարգև՝ ուղղակի ու անհուսալի» և որը «հայտնվում է առանց որևէ պատճառի, առանց նրա շուրջ հետազոտություն կատարելու, քանի որ մտածողությունը նրա մեջ

նյութ չի գտնում» (ԻՍԱՀԱԿ ԱԲԲԱՑԻ ՇԱՌ ԿԶ)։ Այս բնագավառում սխալվելու վտանգը հսկայական է, քանի որ գոյություն չունեն քննության դիտական չափանիշներ, սակայն քննությունը հնարավոր է ու ճշգրիտ, այն տեղի է ունենում փորձառու հոգևոր Հայրերի և եպիսկոպոսների կողմից, եկեղեցու միջոցով և եկեղեցու մեջ։ Ինքնաստինքյան հասկանալի է, որ այդ իմացությունն ընձեռող աստվածային ուժը մտավոր և ոչ մի մեթոդի միջոցով չի ղեկավարվում և չի սանձահարվում, գործում է ազատ ու տիրականորեն, երբ գտնում է իր կողմից անհրաժեշտ համարվող նախապայմանները։

Բայց երկարաբանեցինք ավելի, քան հարկավոր էր։

Ձեր գիտական աշխատանքը ընդհանրապես գնահատում ենք շատ բարձր, քանզի ծառայում է մարդուն։

Արտահայտում ենք մեր խորին շնորհակալությունները սիրալիր ընդունելության համար և մաղթում ենք, որ ձեր կարևոր աշխատանքը հաջողությամբ շարունակվի և որպեսզի ձեր հետազոտությունների արդյունքները մշտապես օգտագործվեն ի բարին։

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը լինի ձեզ հետ, ձեր հարազատների և ձեր աշխատակիցների հետ»։

Անդրադառնալով Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի պատմականորեն կարևոր այցին, Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը նշեց, որ այն երկու ժողովուրդներին կապող մի նոր կամուրջ է, որով նոր էջ է արձանագրվում այդ ժողովուրդների պատմության մեջ.

«Հարգարժան և սիրելի պարոն նախագահ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի և թանկագին անդամներ Ակադեմիայի նախագահության, որ այժմ հավաքվել եք՝ պատվելու համար մեր սիրեցյալ եղբայրն ի Քրիստոս, Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ին։

Ես զգում եմ, որ այսօր մի պատմական օր է ապրում այս հաստատությունը, ինչպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և ինչպես մեր Հայոց անկախ նոր պետությունը, որովհետև մենք Կոստանդնուպոլսո Պատրիարքություն ընդունելով առհասարակ պատկերացնում էինք դրքերի միջից Բյուզանդիոնը, Բյուզանդական կայսրությունը, մեր հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ և՛ քաղաքական մարզի մեջ, և՛ եկեղեցական մարզի մեջ, և՛ մշակութային մարզի մեջ։

Այսօր մի նոր էջ է արձանագրվում մեր հայրենի հողում ապրված հայ կյանքի պատմության մեջ, երբ, առաջին անգամը լինելով պատմության մեջ, Պատրիարքը Տիեզերական ոտք է դնում մեր հայրենի հողի վրա ի Հայաստան։ Ես չէի կարող Սուրբ Էջմիածնում նրան ընդունելուց հետո, միասնական աղոթք մատուցելուց հետո, մեր պետության նախագահին, պառլամենտի նախագահին, վարչապետին նրան ներկայացնելուց հետո, նրան չներկայացնել մեր սիրելի գիտնականներին, ովքեր պեղում են մեր պատմությունը և լույս են բերում պատմությունից մեր այսօրվա կյանքի, մեր գալիք օրերի համար։ Ես զգում եմ, որ այսօր մեր գիտնականները, նախագահության անդամները և մյուս անդամները մեր Ակադեմիայի խլթակից կամ ոչ, բոլորն էլ մեր պատմությունը, մեր կյանքը, արդի գիտությունը արժևորում են աշխարհում իրենց հետևողական, լուրջ պրպտողական աշխատանքով։

Այստեղ, այս սրահում մտքովս անցնում է այն պատկերը, որ այսօր Էջմիածնի «արշավանքն» է տեղի ունեցել Գիտությունների Ակադեմիա: Բայց այդ արշավանքը սիրո արշավանք է: Եկել ենք, տեսնում ենք, որ մեր սիրելի գիտնականները իրենց տեղերը տվել են մեր հոգևորականներին և մեր քույր Եկեղեցու՝ Հույն Ուղղափառ Եկեղեցու հոգևորականներին: Եվ դա իսկապես մեր եղբայրության, հոգիի և մտքի եղբայրության գեղեցիկ արտահայտություններից մեկն եմ նկատում և հատկապես Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի այստեղ գալը ես արժևորում եմ ոչ թե նրա Աթոռի պատմականության և հռչակավորության համար, այլ իր անձի գիտնականությանը և աստվածաբանական իր վաստակի համար, որովհետև ես ցանկանում եմ, որ դուք կարդաք անպայման թարգմանությամբ իր ամբողջական ճառը: Նա ձևական խոսք չի ասի, նա ընդհանրապես խորացյալ մտածումներով, խոկումներով կարտահայտվի, ինչպես երեկ արեց, երեկոյան, մեծ Ֆիլհարմոնիայի սրահում, երաժշտությունը եկեղեցական աստվածաբանական տեսակետից ինչ կարժի, այդ նյութի մասին խոսելով:

Նրան ընկերակցող գիտնականները՝ իմ սիրեցյալ եղբայրը, Խրիսոստոմոս, Եփեսոսի միտրոպոլիտը, իմ երկար տարիների բարեկամն է եղել: Նա աստվածաբանական գրքեր է գրել, հոդվածներ է գրել և Հայ Եկեղեցու հետ հարաբերության մարզում նոր հորիզոններ տեսնելու ձգտումն է ունեցել, և նաև Դամասկինոս Սրբազանը, ում գիրքն արդեն դուք կտեսնեք հայերենով թարգմանված: Նա շարունակում է Շամբեզի կոչված կենտրոնում Տիեզերական Պատրիարքի հովանավորության ներքո գիտական պրպտումներ կատարել և ինձ առաջարկեց, որ եթե գտնվեն հայ հոգևորականներ կամ աշխարհականներ, ովքեր ուզենան գիտական պրպտումներ կատարել, իրենք տեղ ունեն և կրթաթոշակ ունեն այդ տեսակ աշխատանքների համար:

Բարեկամներս, այսօր Բյուզանդիոնը, Կոստանդնուպոլիսը դուրս է գալիս գրքերից և ահավասիկ կենդանի ներկայություն է դառնում մեր ապրումներում և մեր կյանքում:

Ես չնորհավորում եմ մեր Ակադեմիան: Ինձ համար էլ առաջին անգամն է, որ գտնվում եմ այս սրահում և որքան գեղեցիկ է տեսնել, թե ինչպես եկեղեցին ու գիտությունը այնպես հակադրված չեն, ինչպես միջին դարերում մարդիկ երևակայում էին: Փոխվեց մթնոլորտը: Այսօր գիտություն և կրոնք հակասելը անբնական և արվեստական երևույթ է, որովհետև փաստորեն գիտությունը որքան խորանում է, այնքան հավատքն ամրանում է, այնքան տիեզերքի մեծությունը զգացվում է, այնքան խորհրդավորությունը մեր տիեզերքին մեծանում է մտքում: Ես լսել եմ մեծ գիտնականներին, ովքեր եկել են Օքսֆորդի համալսարան: Նրանցից մեկը, որ դեպի անջրպետ արձակված տիեզերանավի ալիքները բռնող գիտնականը՝ պրոֆեսոր Լոուելը, այդ համալսարանում ասաց, թե որքան մտնում ենք անջրպետի ուսումնասիրության մեջ մակրոկոսմոսի ուսումնասիրության մեջ, այնքան հիանում ենք ստեղծագործությամբ՝ այնքան խորանում է հավատքը մեր մեջ: Որքան իջնում ենք ատոմական ուժի, ատոմի ուսումնասիրության մեջ, հիանում ենք, թե այդ անտեսանելի, անշոշափելի, անդննելի մեկ առարկայի մեջ ինչքան ուժ կա և ինչքան կարողականություն:

Մեկ խոսքով, այսօր ես, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, մեր

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ԱՌՋԵՎ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

ՎԵՀԱՐԱՆԻ ՄՈՒՏՔԻՆ. ԵՐԿՈՒ ՀՈՎՎԱՊԵՏԵՐԸ՝
ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՈՎ

միաբանության անդամների հետ միասին եկել եմ այստեղ ասելու Եկեղեցի և պետություն, Եկեղեցի և Ակադեմիա մենք ձեռք-ձեռքի տալով ենք առաջ տանելու մեր ժողովրդի հառաջագնացությունը պատմության մեջ և ոչ թե միայն պատմության հիշողությամբ: Այդ պատճառով մեր սիրեցյալ եղբոր այցելությունը կրոնական չէ միայն, այլ դիտական է, ոչ թե միայն եկեղեցական է, այլ նաև մտավորական, իմացական տարածք կբանա մեր փոխհարաբերությունների մեջ, ընդմեջ Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքության և մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի»:

Այնուհետև, ի նշան Հայ Եկեղեցու և ժողովրդի հանդեպ տածած սիրո, Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքը Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանին հանձնեց հուշանվերներ, ինչպես նաև Շվեյցարիայի միտրոպոլիտ Նորին Գերապանցություն Դամասկինոս Պապանդրեուի «Հայ Առաքելական Եկեղեցին մինչև Դ Տիեզերական ժողովը» խորագիրը կրող գիրքը, որը հայերենի է թարգմանել Մայր Աթոռի միաբան Տ. Եղնիկ եպիսկոպոս Պետրոսյանը:

Իսկ Ամենայն Հայոց Հայրապետը Օրմանյան Պատրիարքի «Համապատում»-ի ակդորինակները նվիրեց Ազգային Ակադեմիային:

Իր հերթին պրեզիդենտ Ֆադեյ Սարգսյանը Հունաց Տիեզերական Պատրիարքին ընծայեց մի գեղանկար, ինչպես նաև հայագիտական և բյուզանդական հրատարակություններ, որոնք հեղինակել են հայ գիտնականները:

Հանդիպմանը ներկա էր Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակոր դեսպան Յակովոս Սպեցիոսը, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լապար Սուրյանը, պաշտոնատար այլ անձինք, գիտնականներ:

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ

Գիտությունների Ազգային Ակադեմիայից Հայ և Հույն Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետի և Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի գլխավորությամբ, այցելեցին Մաշտոցի անվան Մատենադարան:

Ներկաների թվում էին Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակոր դեսպան Յակովոս Սպեցիոսը, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լապար Սուրյանը:

Մուտքի մոտ բարձրաստիճան հյուրերին դիմավորեց Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանը: Բարեողջույնի խոսքերից հետո Մատենադարանի տնօրենը Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին և ուղեկցող շքախմբին մանրամասնորեն ծանոթացրեց հայոց հոգևոր մշակույթի այս կենտրոնին, ուր ի մի են կետեղված դարերի ընթացքում հավաքված և մեծ խնամքով պահվող համաշխարհային արժեք ունեցող հայոց, ինչպես նաև օտարազգի հնագույն եպակի ձեռագրերը: Տնօրենը մեծ հպարտությամբ նշեց նաև, որ դպրության ու գիտության կենտրոն Մատենադարանում գտնվող հայոց գրչագիր մատյաններն իրենց խունացած էջերում պահպանել են հայ ժողովրդի դառն ու տառապալի ժամանակների պատմությունը: Այժմ աշխարհի

տարբեր գրադարաններում ու թանգարաններում պահվող հայերեն ձեռագրերի խոշորագույն հավաքածուն Մաշտոցյան Մատենադարանին է:

Խորին ակնածանքով շրջելով ցուցասրահում, մոտիկից ծանոթանալով Մատենադարանում պահվող գանձերին, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն իր անթաքույց հիացմունքը հայտնեց հայ ժողովրդի նկատմամբ, որն այդպես սրբությամբ ու գորովանքով, աչքի լույսի պես է պահել-պահպանել ձեռագիր մատյանները:

Վերջում փոխանակվեցին հուշանվերներ:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԵՎԱՆ

Օրվա երկրորդ կեսին Մատենադարանից ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Սևան՝ Հայոց Աշխարհի երկնագույն մարգարիտը, որպեսզի հյուրերը մոտիկից կմայլվեն Գեղարքունյաց Ծովակի մաքրամաքուր գեղեցկությամբ, հաղորդակից դառնան Գեղամա լեռներից փոխանցվող վեհությանը:

Այստեղ բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին «Վայգենյան» դպրանոցի ուսուցչական կազմը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչները, դպրանոցի սաները:

«Հրաշափառ»-ով մուտք գործելով դպրանոց, բարձրաստիճան հյուրերին բարիգալստյան խոսք ասաց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպսկ. Ներսիսյանը:

Գեղարվեստական փոքրիկ հայտագրով հանդես եկան սաները: Որից հետո հավաքվածներին իրենց հայրապետական պատգամները փոխանցեցին երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները՝ ուսանողությանը կոչ անելով լինել ավագների արժանի փոխարինող և հավատարմորեն ընթանալ ընտրած դժվարին ու պարտավորեցնող ուղով:

Վերջում, որպես եղբայրական սիրո ու բարեկամության խորհրդանիշ, դպրանոցի բակում Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը տնկեց մի ծառ:

Այնուհետև, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, տրվեց պաշտոնական ճաշ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՎՈՂ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Վերադառնալով Սևանից, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն իրենց շքախմբերով այցելեցին քաղաքամայր Երևանում կառուցվող Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու տարածք, ուր նախագծի հեղինակ և ճարտարապետ Ստեփան Հյուրքչյանը հյուրերին մոտիկից ծանոթացրեց տաճարի մանրակերտին, մանրամասնորեն ներկայացրեց ընթացող շինարարական աշխատանքները:

***

Օրն ավարտվեց երեկոյան հյուրերի ընդունելությունների կառավարկան տանը, ի պատիվ Հայ և Հույն Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունների, Հունաց դեսպանատան կողմից տրված պաշտոնական ընթրիքով:

Գրավոր ճառով հանդես եկավ դեսպան Յակովոս Սպեցիոսը, իր խոր գոհունակությունը հայտնելով այս շնորհաբեր այցելության համար, որը նա մի կարևոր քայլ համարեց հայ-հունական հարաբերությունների զարգացման տեսակետից:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՂԵՏԻ ԳՈՏԻ. ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Հուլիսի 23-ին, այցելության երրորդ օրը, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքի գլխավորած պատվիրակությունը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և հոգևորական դասի ուղեկցությամբ, այցելեց աղետի գոտում գտնվող Գյումրի:

Ներկաների թվում էին նաև Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակոր դեսպան Յակովոս Սպեցիոսը տիկնոջ և դստեր հետ, ՀՀ կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լապար Սուջյանը, տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:

Այստեղ երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդներին ջերմորեն դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս արքեպսկ. Բունիաթյանը, թեմական խորհրդի անդամները, Գյումրիի քաղաքապետ Միքայել Վարդանյանը, քաղաքային և մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև հավատացյալների հոծ բազմությունը, Գյումրիի հունական համայնքը:

«Հրաշափառ»-ով մուտք գործելով Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի, որին ժողովուրդը նաև Յոթ Վերք անունն է տվել, Ավագ խորանի առջև երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները կանոնական աղոթք առաքեցին առ Աստված:

Ողջունելով բարձրաստիճան հյուրերին Գյումրի՝ ավանդույթներով հարուստ ու հնամենի քաղաք, այցելության առիթով և հանուն հավատավոր հոտի հայտնելով իր ուրախությունը, Գրիգորիս Սրբազանը խորին երախտագիտությամբ և որդիական սիրով կարևորեց տվյալ պահը.

«Գյումրիի առանձնահատկություններից մեկն այն է, որ բազմազգ քաղաք է: Այս քաղաքում անցյալ դարի սկզբներից սկսած տարբեր ազգեր իրենց համայնքներով ապրել են, ընդ որում նաև Հույն համայնքը, որը միշտ կարևոր ներկայություն է եղել և այսօր է քաղաքում: Ահա մենք, ողջունելով թե՛ տեղաբնակ հայ ազգաբնակչությանը, թե՛ Հույն համայնքին, և ես էլ որպես ներկայացուցիչ Շիրակի թեմի, պիտի խնդրեի գուցե հայրապետներին, որպեսզի իրենց օրհնության խոսքը և ուղղակի իրենց օրհնությունը բաշխեին մեզ»:

Այնուհետև ներկա հավատավոր ժողովրդին իրենց հայրական

օրհնանքն ու ժայրապետական պատգամը հղեցին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը նշեց, որ ամեն անգամ Գյումրի այցելելով մեծ ուրախություն է ապրում՝ տեսնելով գյումրեցու նվիրվածությունը սեփական Եկեղեցուն և հավատարմությունը նախնյաց հավատքին: Ապա ավելացրեց.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Բարդուղիմեոս Ա և սիրելի հոգևոր եղբայրներ, քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, հարգելի պարոն դեսպան Հունաստանի և սիրեցյալ թանկագին հավատացյալներ Գյումրիի, Շիրակի մեր թեմի.

Դուք լավ գիտեք, որ ես ամեն անգամ, երբ Գյումրի եմ գալիս, սիրտս հրճվում է, կամքս ուժեղանում է, որովհետև զգում եմ ձեր մեջ սիրո և հավատքի կապվածությունը մեր Սուրբ Եկեղեցուն և մեր հայրենի քրիստոնեական մաքուր, հարազատ ավանդություններին: Գյումրին ծանոթ է որպես Եկեղեցու հավատացյալների կենդանի հավատքի ապրումի օջախ:

Ես ողջունում եմ ձեզ: Այսօրվա իմ ուրախությունը բազմապակտված է, որովհետև ինձ հետ եկել է այս քաղաքին իր աղոթքը, օրհնությունը, հայրական հոգածությունը, զորակցությունը արտահայտելու Կոստանդնուպոլիս մայրաքաղաքի Տիեզերական հռչակավոր Պատրիարքարանի գահակալը՝ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Պատրիարքը:

Ահավասիկ երրորդ օրն է, որ նա գտնվում է Հայաստանի հողի վրա: Առաջին բոպեին նա օրինակելի համեստությամբ և խոնարհությամբ երկրպագեց Սուրբ Էջմիածնի այն Իջման վայրը, ուր Աստուծո Որդու ձեռքն էր դիպել: Այդ նվիրականագույն, սրբագույն կենտրոնի մեջ իր սրտի խոսքն ասաց ողջ հայ ժողովրդին Մայր Աթոռի Սրբազան Բեմից:

Նա եղավ մեր նորանկախացյալ հանրապետության նախագահի, մեր խորհրդարանի նախագահի, վարչապետի մոտ, եղավ Ակադեմիայում, եղավ Մատենադարանում, եղավ Երևանի մեր նորաշեն Մայր եկեղեցու հիմքերի մոտ, աղոթք արեց: Մի խոսքով նա սկսեց առավել մոտիկից ճանաչել մեր ժողովրդին Հայաստանում: Եվ ինչպե՞ս կարելի է ճանաչել ողջ հայ ժողովուրդը, առանց ճանաչելու Գյումրիի Հայությունը: Դրա համար ես առաջնորդ սրբազանին հայտնեցի առաջին իսկ վայրկյանին, որ Նորին Սրբությունը երբ Հայաստան այցելի, Երևանով միայն չգոհանա, հին-հին վանքերով չգոհանա, գա, տեսնի աղետից ազատված, երկրաշարժից դուրս եկած, բայց իր հոգով ամուր մնացած, կամքով տոկուն մնացած Գյումրիի մեր Հայությունը և բերի իր օրհնանքը ձեզի, որ առավել ևս զորանա ձեր ուժը՝ մեր Հայրենիքի վերաշինության համար:

Այսօր որքան ուրախ եմ, որ մեր սրբազաններից, Հայաստանի առաջնորդներից, նաև Երուսաղեմի և Կոստանդնուպոլսո Պատրիարքություններից ներկայացուցիչ եպիսկոպոսներ, Հունաստանի հարգարժան և սիրելի դեսպանը՝ Ցակովոսը, իր տիկնոջ հետ միասին ներկա է այստեղ, Եվրոպայից եկել են եպիսկոպոսներ՝ Նորին Սրբությանը ողջունելու ի Հայաստան այս առաջին այցին: Սա առաջին դեպքն է ողջ պատմության մեջ, որ Կոստանդնուպոլսից Տիեզերական Պատրիարքը գալիս է մեր Հայաստան աշխարհը:

Ձերդ Սրբություն, սա Ձեր օրն է Գյումրիում: Ես ցանկանում եմ, որ Դուք

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Ձեր պատգամը հղեք Գյումրիի մեր հավատավոր ժողովրդին, որ այսօր ներկա է այստեղ Ձեր այցելության ուրախ առիթով»:

Իր երախտագիտությունը հայտնելով այսքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար, Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը նշեց, որ Գյումրի կայցելեր առավել մեծ ուրախությամբ, եթե եղած չլիներ ավերիչ երկրաշարժը, իսկ քաղաքը չգտնվեր աղետի գոտում: Հույս հայտնելով, որ հայ ժողովուրդն իր աննկուն կամքի և վորեղ հավատքի շնորհիվ արագորեն կվերգտնի իրեն, Բարդուղիմեոս Ա Պատրիարքը մաղթեց փորձությունների շուտափույթ հաղթահարում՝ ի մասնավորի նշելով.

«Շնորհակալություն եմ հայտնում Ամենաբարձրյալ Աստծուն, որ մեզ հնարավորություն տվեց այսօր գտնվելու այստեղ՝ Հայաստանի երկրորդ քաղաքում, այս հավատացյալ ժողովրդի հետ միասին: Մեր ուրախությունը շատ ավելի մեծ կլիներ, եթե ինը տարի առաջ տեղի ունեցած չլիներ այն ավերիչ երկրաշարժը այս քաղաքում: Այդ երկրաշարժի ժամանակ դուք կորցրեցիք ձեր շատ ազգականներին ու բարեկամներին, հարևաններին: Մենք աղոթում ենք իրենց հոգիների հանգստության համար: Կործանվեցին բազմաթիվ շենքեր և ձեր եկեղեցիները: Սակայն, փառք Աստուծո, դուք ունեք հոգեկան մեծ ուժ և հավատքը ձեր հոգում, որպեսզի կարողանաք վերականգնել, վերաշինել թե՛ ձեր տները, թե՛ այս քաղաքը:

Օրհնում եմ ձեզ և գնահատում այն խորը հավատի համար, որ դուք ունեք: Ցավը և օրհնությունն անբաժանելի են մարդկային կյանքից այս աշխահում: Մաղթում եմ, որ Հոբի նման դուք նույնպես անցնեք փորձություններից և ստանաք այն ամենը, ինչ որ ստացավ Հոբը»:

Վերջում Տիեզերական Պատրիարքը, ի հիշատակ այս ջերմ հանդիպման, Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցուն նվիրեց մի բուրվառ:

ՀԵՊԱԶՐՈՒՅՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ

Հավարտ եկեղեցում տեղի ունեցած հանդիսավոր արարողության, Գարեգին Ս Ամենայն Հայոց Կաթողիկոսը և Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն իրենց շքախմբերով առաջնորդվեցին դեպի Շիրակի թեմի առաջնորդարան, ուր տեղի ունեցավ հակիրճ ճեպազրույց, հրնթացս որի տեղական լրատվական ծառայությունների ներկայացուցիչների հարցերին հանգամանալից պատասխաններ տվեցին երկու քահանայապետերը:

ՀԱՐՑ.- Նորին Սրբություն, Գյումրիի «Շիրակ» հեռուստատեսությունը, լրատվության մյուս միջոցները ողջունում են Ձեր այցելությունը Շիրակի մարզ, մասնավորապես Գյումրի քաղաք:

Ինչպիսի՞ն են Հայ և Հույն Եկեղեցիների փոխհարաբերությունները և Ձեր տպավորությունները Հայաստան աշխարհից:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Շնորհակալություն այս հնարավորության համար, որ դուք ստեղծում եք, որպեսզի ձեր միջոցով ես իմ պատգամը հայ հավատացյալ ժողովրդին և ձեր անձի միջոցով փոխանցեք մնացած բոլոր լրագրողներին իմ գնահատանքը և շնորհակալությունը այն բարի գործի համար, որ դուք միշտ կատարում եք:

Իբրև լրագրողներ, իբրև հեռուստատեսության աշխատողներ, դուք շատ մեծ ուժ ունեք ձեր ձեռքում, սակայն ունեք նաև պարտականություններ, որովհետև հասարակական միտքը հիմնականում ձեր ասածի միջոցով է ձևավորվում:

Ինչ վերաբերվում է Հայաստանի մասին իմ տպավորություններին, դրանք շատ գերապանց են: Հայաստանը տառապանքներ կրած մի երկիր է, սակայն շատ կորեղ է և տոկուն: Ես միշտ էլ մեծ ցանկություն եմ ունեցել այցելելու Հայաստան:

Հարցրեցիք նաև մեր երկու Եկեղեցիների փոխհարաբերության մասին: Մեր հարաբերությունները եղբայրությունից ավելի բարձր են: Անձնապես Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ մենք երկար տարիների բարեկամներ ենք և միասին աշխատում ենք Եկեղեցիների միության համար: Նորին Սրբության անցյալ տարվա այցելությունը Թուրքիա՝ Տիեզերական Պատրիարքություն և իմ այս տարվա այցելությունը Հայաստան քայլեր են, որոնք արվում են մեծ նպատակի, հաջողության, Եկեղեցիների միության համար:

Այսօր, երեկոյան, մենք մի հանդիպում պիտի ունենանք Հայ Եկեղեցու Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ: Այդ հանդիպման ժամանակ մենք պետք է ամենայն մանրամասնությամբ և լրջությամբ խոսենք այն խնդիրների մասին, որոնք մենք պետք է իրագործենք առաջիկայում: Դուք պետք է գոհ լինեք և փառաբանություն մատուցեք Աստծուն, որ ձեզ ուղարկել է այսպիսի մի լուսամիտ, փառավոր և մեծ անձնավորություն իբրև հովվապետ:

ՀԱՐՑ.- Վեհափառ Տեր, երկու խոսքով կարևորեք այս այցելությունը: Մենք գիտենք, որ հայ և հույն ժողովուրդների բարեկամությունը գալիս է դարերի խորքից և, անշուշտ, հարատևելու է, շարունակվելու է: Ի՞նչ կասեիք այս այցելության առիթով:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ես անհունորեն ուրախ եմ, որ այսօրը դառնալու է հիշարժան Գյումրիի մեր հայ ժողովրդի պատմության մեջ, և Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա-ի այցելությունը ի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ի Հայաստան դառնալու է պատմական դեպք, որ երբեք չի եղել 1700 տարիների ընթացքում մեր երկու ժողովուրդների և երկու Եկեղեցիների կյանքում:

Դուք, սիրելի գյումրեցիներ, զգացեք այսօր, որ մի նոր էջ է բացվում մեր պատմության մեջ, մի նոր դեպք է կատարվում Գյումրիի պատմության մեջ: Ժամանակին, Բյուզանդական կայսրության օրերին, բանակներ են անցել մեր երկրի վրայից: Մենք ունեցել ենք պայքարի օրեր, մենք ունեցել ենք պառակտումի ժամանակներ, բայց Եկեղեցիները մնացել են առհասարակ եղբայրական գործակցության մեջ:

Քաղաքական իշխանությունները կգան ու կերթան, թագավորություններ կստեղծվեն ու կկործանվեն, բայց Եկեղեցին՝ Աստծու ներկայությունը ժողովրդի մեջ, Քրիստոսի Ավետարանի միջոցով և մեր հայրերի ավանդությամբ, դա չի կորչի: Դա է, որ մեզ կպահպանի: Այս հոգևոր այցելությունները մեր մեջ այս գաղափարներն են վերարծարծում, վերանորոգում են մեր ժողովրդի կյանքը:

Ես բարձրորեն գնահատում եմ իմ սիրեցյալ եղբորը: Նա գալիս է մի

պատմական ու փառավոր Աթոռից: Տեսեք, Բյուզանդական կայսրությունը հազար տարիներից ավելի աշխարհում տիրեց, բայց ընկավ: Օսմանյան կայսրությունը եկավ, բայց Կոստանդնուպոլսո Պատրիարքությունը, Տիեզերական Պատրիարքությունը և Հույն Օրթոդոքս Եկեղեցին մնաց: Սա է, որ մեր ժողովուրդը պետք է սովորի այս այցելությունների ընթացքում: Այսօր իսկապես ես հուզվեցի, երբ տեսա ժողովրդի այս հսկա բազմությունը: Գիտեք, որ այսօրը գործի օր է: Սմեն մարդ իր գործին է գնալու: Եվ հակառակ այդ իրողությանը, ո՛չ կիրակի լինելուն և ո՛չ արձակուրդի օր լինելուն, մեր ժողովուրդն այսպես կընդունի Նորին Սրբությանը և Մեզ, դա իր արժանիքն է, որի համար շնորհավորում եմ մեր ժողովրդին և մաղթում, որ այս հոգին կենդանի մնա ձեր բոլորի մեջ:

ՀԱՐՑ.- Վեհափառ Տեր, Դուք հավատո՞ւմ եք, որ կգա այն օրը, երբ հավատը կհաղթանակի ժողովրդի մեջ:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Ի՞նչ է նշանակում կհաղթանակի: Անշուշտ: Հավատքը, տղաս, կնմանի լույսի: Լույսը արևից ճառագայթ ունի: Բայց եթե մենք երբեք պատուհանը փակենք և փակենք նաև մեր աչքերը, լույսը չենք տեսնի: Եվ կամ կիսով բանանք, տկար կտեսնենք: Հավատքը մի այսպիսի ուժ է, որ մարդուն տալիս է հոգեկան զորություն՝ նեղությանց դիմաց կենալու, Աստծուն հավատալով և Նրա ուժովը հաղթելու այսօրվան դժվարությունները: Այդ հավատքը վստահությունն է և անխախտելի է: Մի բան ասեմ քեզ և քո ունկնդիրներին: Լենկթեմուրի զինվորներից մեկը մի հայ գրիչի՝ ձեռագիր ընդօրինակողի ձեռքն էր կտրել: Սակայն վերջինս չհուսահատվեց և ասաց. «Ձեռքս գնա և հող դառնա, գիրս այս ձեզ հիշատակ մնա»: Սա հավատք է, սա տրամաբանության հարց չէ: Ո՞վ մարդկանց մեջ քաջություն ունի իր ձեռքը տալու, որ կտրեն՝ քաջ գիտակցելով, որ այլևս գրիչ չի առնելու: Բայց դրա մեջ հավատքի ուժը կա: Ես ասում եմ, որ եթե միշտ լույսի հետ ստվեր կա, միշտ լույսի կողքին հավատք թող լինի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՏ

Ճեպազրույցից հետո առաջնորդարանի սրահում տեղի ունեցավ հանդիպում հունական համայնքի հետ, հընթացս որի սրտի և ուրախության խոսքեր ասացին համայնքի ներկայացուցիչները՝ ներկայացնելով իրենց առօրյան, նիստ ու կացը հայրենիքից հեռու այս անկյունում՝ Գյումրիում, որի հոգսն ու ցավը դարձել է նաև համայնքի սեփականը, ուր երկրորդ մայրենի է համարվում հայոց ոսկեղենիկ լեզուն, և ուր իրենց հայրենանվեր գործունեությամբ հայ ժողովրդի կավակներից ետ չեն մնում նաև հույն ժողովրդի տեղաբնակ կավակները:

Ողջունելով սիրելի Պատրիարքի ներկայությունը Գյումրիում և հանդիպումը տեղի հունական համայնքի՝ Հույն Ուղղափառ Եկեղեցու հարազատ կավակների հետ, համայնքի ատենապետուհին ավելացրեց.

«Մեծարգո Տեր Պատրիարք, Նորին Սրբություն Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Շիրակի մարզից և Գյումրիի հունական համայնքի անունից ջերմորեն ողջունում եմ Ձեր այցելությունը Գյումրի: Մենք հուսով ենք և հավատով լցված, որ Հայ և Հույն Եկեղեցիների բարեկամությունը իր նպաստը կբերի երկու բախտակից ժողովուրդների բարեկամության, մերձեցման և համագործակցության բնագավառներում:

Վսեմաշուք Պատրիարքի այցը Հայաստան մեկ անգամ ևս վկայում է մեր երկու ժողովուրդների դարերի խորքից եկող եղբայրական փոխադարձության մասին: Մենք հավատացած ենք, որ մեր Հայ Առաքելական և Հույն Ուղղափառ Եկեղեցիները իրենց գործունեությամբ նպաստել են Հայ և Հույն ժողովուրդների գոյատևմանը և ինքնահաստատմանը: Անդնահատելի է մեր ժողովուրդների հոգևոր առաջնորդների հերոսական սխրանքները երկու ժողովուրդների բարեկամության զորացման բնագավառում: Այժմ էլ մեր ազգերի գերխնդիրն է համագործակցություն, միաբանություն համաշխարհային ընդհանուր գործի հաջողության համար:

Բարի գալուստ, Վեհափառ Տեր, բարի գալուստ, Վսեմափառ Պատրիարք: Ես խորին շնորհակալություն եմ հայտնում ողջ Հույն համայնքի ներկայացուցիչներին, ովքեր ամեն անգամ մեծ սիրով գալիս են, բարեկամորեն ընդունում են մեր բոլոր հյուրերին»:

Բարիգալստյան խոսք ասաց նաև Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիապոր դեսպան Յակովոս Սպեցիոսը.

«Սիրելի Վեհափառ Տեր, Վսեմաշուք Պատրիարք.

Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում այն բանի համար, որ այսօր գտնվում եմ Շիրակում և Գյումրիում և որն առաջին անգամը չէ: Ինձ այսօր մեծ ուրախություն է պատճառում այն, որ այս այցելության շրջանակներում Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա-ը եկել է այստեղ՝ Շիրակ, Գյումրի, որը Հայաստանի երկրորդ քաղաքն է համարվում: Ես չեմ ցանկանում ձեզանից շատ ժամանակ խլել: Մենք անշուշտ տեղյակ ենք այն բարդություններին, որոնք առկա են այստեղ: Այն վերքերը, որ ունեն այստեղի մարդիկ, շատ խորն են: Հայերն ու հունական համայնքի անդամներն այստեղ միշտ կողք-կողքի են: Իհարկե նրանք ավելի շատ ապրում են իրենց վերքերի պատճառած ցավը, քան խոսում այդ մասին:

Հունական կառավարության հետ մենք աշխատեցինք վերջին տարիներին կազմակերպել մի օգնություն, անել առաջին քայլերը լեզվի ուսուցման գործում: Ինչ խոսք, երեք-չորս տարվա ընթացքում շատ դժվար է իրականացնել մեր նախատեսած բոլոր ծրագրերը, բայց արդեն, հենց իմ առաջին իսկ այցելության ժամանակ ես զրուցեցի ղեկավարության հետ: Մենք քննարկում ենք հնարավորություններ, թե ինչ ճանապարհներով կարելի է օգնել տեղական իշխանություններին բնակարանային հարցը լուծելու խնդրում, կամ թեկուզ հիմնել աշխատավայրեր: Իհարկե, սա մի ծրագիր է, որն առայժմ քննարկվելու է տարբեր շրջանակներում: Եվ ես հավատում եմ, որ այսօրվա այցը Գյումրի հոգեպես կամրապնդի ժողովրդի հավատքը, առանձնապես հունական համայնքի ներկայացուցիչներինը: Ես անձամբ խնդրում եմ, որպեսզի նրանք կարողանան ամուր լինել: Դեսպանատունն իր հերթին կանի ամեն ինչ իր կարողությունների սահմաններում, և ձեր օգնությամբ: Ես հավատում եմ, որ Գյումրին այն քաղաքներից մեկն է, որ գտնվում է մեծ ճանապարհների միջև, արևելքի

երկու աշխարհների միջև: Ես հավատում եմ, որ հետագայում այս երկիրը կունենա մեծ արդյունքներ: Մենք էլ մեր կողմից կաշխատենք մեր ներդրումը կատարել: Հունական ծագում ունեցողներն այս շրջանում շատ քիչ են թվով, բայց մեր ժողովրդի պատմության ընթացքում մենք երբեք հիմք չենք ընդունել թվաքանակը: Սակայն միշտ էլ կարևոր նշանակություն է տրվել հավատքին, հոգու ուժին: Սա ենք հիմք ընդունում մենք նաև այսօր»:

Դիմելով հարապատ ժողովրդի կավակներին, Բարդուղիմեոս Ս Տիեզերական Պատրիարքն ընդգծեց, որ հույներն իրենց ճակատագրով, անցած պատմական ուղիով ընդհանրություններ ունեն հայ ժողովրդի հետ: Նրանք ևս սփոված են աշխարհով մեկ: Սակայն, ապրելով Հայրենիքից հեռու, մշտապես պահել ու պահպանել են իրենց ավանդները, վառ պահել սեփական հավատքն ու ոգին.

«Ես իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեզ այսօր ընձեռնված այս հնարավորության համար: Առաջին հերթին շնորհակալանքի իմ խոսքն ուղղում եմ Վեհափառ Հայրապետին նաև այս գեղեցիկ հանդիպման համար, Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Յակովոս Սպեցիոսին, որ մեզ հետ այստեղ է:

Մեր շքախմբի ներկայացուցիչները և անձամբ ես մեծ ուրախություն ենք տածում այս հանդիպման առիթով: Մենք իհարկե գիտենք, որ հույները ցրված են ողջ աշխարհով մեկ: Այսօր յուրօրինակ զգացումով ենք այստեղ հանդիպում հույների հետ: Դուք փոքր դժվարություններ եք զգում հունարեն խոսելիս, բայց դա այնքան էլ մեծ նշանակություն չունի, երբ մենք խոսում ենք հունական ոգին ձեր մեջ վառ պահելու մասին: Դուք լավ եք ճանաչում Կապադովկիայի շրջանում ապրող հույներին, որ խոսում են թուրքերեն: Պատմականորեն նրանք կորցրել են իրենց մայրենի հունարեն լեզուն, սակայն դա չի նշանակում, թե նրանք իրենց ավելի քիչ են հույն զգում, քան նրանք, ովքեր խոսում են հունարեն:

Ինչպես բոլոր մարդիկ, այնպես էլ մենք՝ հույներս, առանձնահատուկ զգացումներ ենք ապրում մեր հույն լինելու համար: Ես համոզված եմ, որ նույն զգացումներն եք ապրում նաև դուք՝ Հայաստանում ապրող հույներդ: Եթե մարդիկ կյանքում հիմնվում են ուզղափառ հավատքի, քրիստոնեության վրա, դա ամենամեծ օգնությունն է, որ երբևէ կարող է ունենալ մարդն այս կյանքում: Մենք լսեցինք ձեզ շրջապատող դժվարությունների մասին, նաև հնարավորության սահմաններում տեսանք, սակայն ցավով պիտի ասեմ, որ այստեղ աշխատատեղեր ստեղծելու մեր հնարավորություններն իհարկե շատ սահմանափակ են, բայց երկու ազգերի՝ հայերի և հույների բարեկամությունը և համագործակցությունը, ինչպես նաև Հունաստանի դեսպանատան ներկայությունն այստեղ՝ Հայաստանում, իրենց ներդրումը կունենան այս խնդրի լուծման գործում:

Անցյալում, խորհրդային շրջանում, իհարկե դուք մեծ դժվարություններ եք ունեցել այստեղ, սակայն կարողացել եք պահպանել ձեր ազգային ինքնությունը, ձեր սրտերում ամուր եք պահել ձեր ազգային ավանդույթները, որի ականատեսներն ենք մենք այժմ նոր և ազատ Հայաստանում: Ես համոզված եմ, որ պարոն դեսպանը և դեսպանատան բոլոր աշխատակիցները, ինչպես նաև այն կառավարությունը, որ պարոն դեսպանն այստեղ

ներկայացնում է, կանեն ամեն ինչ՝ ձեր դժվարությունները հաղթահարելու համար: Մենք նույնպես, որպես եկեղեցի, մեր հնարավորությունների սահմանում կփորձենք սատար կանգնել ձեզ:

Ես, իմ Հայաստանում գտնվածս օրերի ընթացքում, ստացել եմ նամակներ հունական համայնքից, ինչպես նաև անհատներից: Իհարկե ես կծանոթանամ այդ նամակների բովանդակությանը, երբ վերադառնամ:

Վաղը, առավոտյան, քաղաքամայր Երևանի առաջնորդանիստ եկեղեցում բոլորս միասին մեր աղոթքը կառաքենք առ Աստված: Ես իմ լման կներդնեմ, որպեսզի դուք ունենաք ձեր ուղղափառ եկեղեցին, որովհետև ուղղափառ հույները միշտ պետք է համախմբվեն եկեղեցու շուրջ: Եկեղեցում ենք մենք գտնում հանգստություն, եկեղեցուց ենք քաղում մեր ուժը, եկեղեցի ենք գնում մեր երեխաների հետ, եկեղեցի ենք գնում հարսանիքների ժամանակ և եկեղեցում ենք հիշում մեր հանգուցյալներին: Հենց այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ դուք մոտ ապագայում կարողանաք ունենալ ձեր ուղղափառ եկեղեցին: Մենք վստահ ենք, որ Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսն իր կողմից ամեն ինչ կանի՝ այս հարցը լուծելու համար: Նաև համոզված եմ, որ Հայաստանի կառավարությունն իր եկեղեցու հետ մեկտեղ կունենա իր ներդրումը»:

Իր խոսքում Սմենայն Հայոց Հայրապետը շեշտեց, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները բոլոր ժամանակներում էլ որևէ տարբերություն չեն տեսել հայերի և հույների միջև, խտրականության հարց երբեք չի ծագել: Հույները ևս մեր երկրի լիարժեք քաղաքացիներն են ու հարազատ կավակները.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարք Կոստանդնուպոլսո, սիրելի հոգևոր եղբայրներ Խրիսոստոմոս, Դամասկինոս, Մելիտոն, Սերաֆիմ և բոլոր ծանոթներս,

Բոլորդ էլ այսօր այս քաղաքին մեջ այնպիսի մնայուն հետք թողեցիք, որ պիտի հիշվի երկար ժամանակ Գյումրիի հայոց պատմության մեջ: Որովհետև այսօր մենք գտնվում ենք մեր սիրելի հունազգի և հայաստանցի եղբայրների ու քույրերի հետ, ես ողջունում եմ նրանց և ասում՝ ով սիրելի եղբայրներ և քույրեր, դուք հունական ծագում ունեք, բայց ապրում եք մեր երկրում, դուք մեր զավակներն եք ուզեք կամ չուզեք: Եվ եթե երբեք իմ Պատրիարք եղբորս ձեռքը չհասնի, իմ ձեռքը իր ձեռքը թող լինի ձեզ համար: Եվ երկրորդ, մենք ամեն ինչ կանենք, որ դուք ձեր եկեղեցական, ծիսական ավանդությունը լավ պահեք: Ինչպես ասաց ինքը, երբ համայնքը կազմակերպվի, երբ դուք ուզեք, մենք ամեն դյուրություն կստեղծենք, որպեսզի դուք ունենաք ձեր սեփական եկեղեցին, և Պատրիարք Սրբազանն ուղարկի այնտեղից եկեղեցական:

Բայց մենք այսօր ուրախ ենք այն իմաստով, որ ես չեմ տեսնում տարբերություն հույների և հայերի միջև այս քաղաքում: Երբ ձեր դեմքերին եմ նայում, տարբերություն չեմ տեսնում, նույն դեմքերն են, հայերեն էլ եք խոսում, հունարեն էլ եք խոսում: Հետևաբար, դուք իսկապես մեր երկրի համար հարստություն եք: Պահեցեք ձեր ավանդությունը, չաղվեցեք մեր Հանրապետության մեջ, մեր այս երկիրը զորացուցեք և հույն անունին պատիվ բերեք: Ինչպես ես ասում եմ մեր հայ ժողովրդին, որ Հունաստանի մեջ, Թուրքիո մեջ, ուրիշ երկրների մեջ պատիվ բերեք ձեր հայ անունին:

Մեկը որ ձեզ նայի, հունաց պատիվը բարձր գտնի: Ապրե՛ք բոլորդ էլ, երջանի՛կ ապրեք»:

Հանդիպման վերջում երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ:

Բարդուղիմեոս Ա Տիկերական Պատրիարքը փոքրիկ խաչեր նվիրեց համայնքի բոլոր անդամներին՝ ի հիշատակ այս հանդիպման:

ՍՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԳՄԲԵԹԱՓՈՒԼ ՏԱՃԱՐ

Հանդիպման ավարտից հետո երկու Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, Նորին Սրբություն Գարեգին Ա-ի գլխավորությամբ, առաջնորդվեցին դեպի քիչ հեռվում գտնվող երկրաշարժից վնասված Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, ուր Շիրակի թեմի ջանքերով, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, կազմակերպվել էր գեղարվեստական փոքրիկ հայտագիր՝ Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու երգչախմբի մասնակցությամբ:

Այստեղ հյուրերն ունկնդրեցին հոգևոր երգեր, հատվածներ Ս. Պատարագից:

Ապա Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքին մանրամասնորեն ծանոթացրեց երկրաշարժից խոնարհված տաճարի հարուստ և ուսանելի պատմությանը:

ՍԵՐԳԵՅ ՄԵՐԿՈՒՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Այստեղից բարձրաստիճան հյուրերն առաջնորդվեցին դեպի Գյումրիի Մերկուրովի անվան տուն-թանգարան, ուր նրանց մեծ ուրախությամբ դիմավորեց թանգարանի աշխատակազմը: Յուցասրահներում պատվարժան այցելուներին հանգամանալից ներկայացվեց ցուցադրանքը, մանրամասնորեն ծանոթություն տրվեց տուն-թանգարանի հարուստ պատմության մասին:

Ծանոթության կարգով ասենք, որ թանգարանը Մերկուրովների տունն է: Այն գտնվում է ազգագրական թանգարանի հարևանությամբ, կառուցվել է 1869 թվականին, Մերկուրովի պապի՝ Մերկուրիդիի կողմից, որը 100 հույն ընտանիքի հետ միասին գաղթում է Արևմտյան Հայաստանից և գալիս Գյումրի՝ Ալեքսանդրապոլ: Թանգարանը երկրաշարժից հետո վերաբացվել է մեկ հատվածով միայն: Մերկուրովի պապն է Ալեքսանդրապոլում կառուցել նաև հունական Ս. Գևորգ եկեղեցին, որն այժմ պահպանվել է միայն նկարներում:

Երբ 1907 թ. վախճանվում է Խրիմյան Հայրիկը, Սերգեյ Մերկուրովը գնում է Էջմիածին և հանում նրա մահադիմակը, որն այժմ սրբությամբ է պահվում տուն-թանգարանում: Մերկուրովն աշակերտել է Օգյուստ Ռոդենին, եղել է Մայերի և Ռյումանի աշակերտը: Վաստակաշատ ժողովրդի կավակը մահացել է 1952 թ. Մոսկվայում և թաղված է Մոսկվայի Նովոդևիչի մենաստանում:

Տուն-թանգարանի աշխատակիցների ներկա ծրագրերից կարևորա-

գույնն է հիմնել Գյուրջինի անվան բարեկամության կենտրոն և համագործակցել ողջ աշխարհում գոյություն ունեցող Գյուրջինյան կենտրոնների հետ:

Այստեղ սրտի խոսքեր ասացին երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները, ապա, ցուցադրանքը դիտելուց հետո, նրանց հանձնվեցին հուշանվերներ:

Վերջում երկու Հայրապետները գրառում կատարեցին տուն-թանգարանի պատվավոր հյուրերի գրանցման գրքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇ Ի ՊԱՏԻՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՀՅՈՒՐԵՐԻ

Մերկուրովի անվան տուն-թանգարան այցելելուց հետո, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, Գյումրիի հունական համայնքի կողմից տրվեց պաշտոնական ճաշ, որին ներկա էին Շիրակի թեմի հոգևորականները, քաղաքային իշխանությունների աշխատակիցները, ինչպես նաև հունական համայնքի ներկայացուցիչները:

Այստեղ ևս փոխանակվեցին սիրո և եղբայրության ջերմ խոսքեր, կարևորվեցին քույր Եկեղեցիների և պետությունների փոխհարաբերությունները, գնահատվեց հունական համայնքի կատարած գործունեությունը Հայոց աշխարհի, ինչպես նաև հարապատ քաղաքի վերակերտման գործում: Շեշտվեց, որ աղետալի երկրաշարժի ծանրությունը հավասարապես ապրեցին կույգ ժողովուրդները, իսկ տնտեսական դժվարին կացությունն ամենևին չհուսահատեցրեց համայնքի ներկայացուցիչներին: Ընդհակառակը, մի բռունցք դարձած, համախմբվեցին և բարեկամության ուժով երկու ժողովուրդների կամակները առ այսօր վերականգնում են կորցրածը՝ հայրենի քաղաքն էլ ավելի շենացնելու և բարգավաճելու ակնկալությամբ:

ՀԱՄԵՐԳԻ ՈՒՆԿՆԴՐՈՒՄ ՎԱՐԴԱՆ ԱՃԵՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին Հայ և Հույն Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, երկու հոգևոր պետերի գլխավորությամբ, ուղղվեցին դեպի Գյումրիի Վ. Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի շենք, ուր, ի պատիվ բարձրաստիճան հյուրերի, կազմակերպվել էր գեղարվեստական հատուկ հայտագիր:

Եղույթներ ունեցան հունական համայնքի մանկական երգչախումբը, Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու երգչախումբը, ինչպես նաև Գյումրիի ժողգործիքների համույթը:

Այնուհետև ներկա հավատավոր ժողովրդին իրենց հայրապետական պատգամը հղեցին Հայոց Հայրապետն ու Հունաց Պատրիարքը:

Նշելով արվեստի և մշակույթի դերը ժողովուրդների կյանքում, Ամենայն Հայոց Հայրապետն ի մասնավորի ասաց.

«Սիրեցյալ եղբայր ի Քրիստոս Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Ա. և սիրեցյալ Հոգևոր եղբայրներ, Թանկագին Հավատավոր, մշակութասեր և արվեստանվեր Գյումրիի ժողովուրդ.

Ես զգում եմ և վստահ եմ, դուք էլ ձեր հոգու խորքում նաև պիտի անպայման զգաք, որ աննախընթաց մի օր եք ապրում ձեր կյանքում և աննախընթաց օր է ողջ Գյումրիում, որովհետև, պատմության մեջ մեր հազարամյա, առաջին անգամն է, որ հին Բյուզանդիոնի, Բյուզանդական կայսրության կենտրոնի՝ Կոստանդնուպոլիս քաղաքի Ընդհանրական Տիեզերական Պատրիարքության գահակալը Հայաստան է այցելում և այսօր Գյումրիում է, ձեզ մոտ:

Ձեր երեսին ասել չլինի, բայց դուք էլ իմանում եք, որ Գյումրիի Հայությունը Հայոց պատմության կերտման մեջ, կազմավորման, հառաջընթացի մեջ իր քրտինքն ունի, իր հալալ վաստակն ունի, և նման մի անձնավորության, համաշխարհային վարկ և հեղինակություն ունեցող անձնավորության այցելությունը Հայաստան թերի պիտի մնար, եթե ամփոփված լիներ միայն Երևանով: Գյումրին ներառանք իր կարճ տևողություն ունեցող այցելության ծրագրում, որովհետև Մեզ համար Գյումրին և Գյումրիի Հայությունը կարևորագույն տարրերից և ազդակներից մեկն է մեր Հայրենիքի վերակերտման այս շրջադարձային նշանակություն ունեցող ազատության, անկախության և մեր անկախ պետականության օրերին: Ես ցանկանում եմ ձեր բոլորին հայտնել իմ խորին շնորհակալությունը և ամենաբարձր աստիճանի Հայրապետական գնահատանքը որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, որ գիտցաք արժեցնել այս օրը ձեր եկեղեցու մեջ այնքան հոգելից ընդունելությամբը Նորին Սրբության և ապա այստեղ մշակութային այս ելույթներով՝ հունական, հայկական մշակույթների ներդաշնակության միջից հնչող հոգու ձայներով երեխաներից, մինչև մեր վարժ արվեստագետները, նվագողները, խմբավարը, մեներգողները, արվեստի բոլոր սպասավորները:

Անցյալ օրը մի խոսք ասացի ես Երևանի «Արամ Խաչատրյան» Ֆիլհարմոնիայի սրահում: Ասացի, Ձերդ Սրբություն, մենք ո՛չ ոսկու հանք ունենք, որ ոսկի նվիրենք Ձեզ, ո՛չ էլ արծաթ ունենք, որ արծաթ նվիրենք և ո՛չ էլ խիստ անհրաժեշտության թանկարժեք նյութեր, մենք երգ ունենք և նվագ, աղոթք ունենք և հավատք, գիրք ունենք և տաճար, մշակույթ ունենք: Այս մշակույթն է, որ այսօր ընծայում ենք Ձեզ Գյումրիում: Գյումրին այդ մշակույթի զարգացման գլխավորագույն օջախներից մեկն է:

Թող երկրաշարժի հետքերն իսպառ վերանան և նոր կյանքի նշանները ճոխանան մեր Գյումրիի և ամբողջ Շիրակի թեմի մեր սահմաններին մեջ: Թող Աստված օրհնի ձեզ բոլորիդ. ամեն»:

Ներկաների հետ կիսելով իր ապրումները, Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն ավելացրեց.

«Երկու օր առաջ Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, որ մեզ ուղեկցում է Կոստանդնուպոլսից մինչև այստեղ, որի համար շնորհակալություն ենք հայտնում, մեքենայում մեզ բացատրեց Հայաստանի Հանրապետության դրոշի երեք գույների այնքան խորհրդավոր նշանակությունը: Դարեր շարունակ հայ ժողովուրդն իր ապրելու իրավունքը նվաճել է ոչ միայն խաղաղության ժամանակ, այլ նաև միշտ դա ապացուցել է իր արյամբ:

Այդ իսկ պատճառով է դրոշի վրա կարմիր գույնը: Հայ ժողովուրդն իր հավատքի խոստովանությունն արել է և անում է նաև այսօր ոչ միայն խոսքով, այլև գործով:

Երկրորդ գույնը, որ կապույտն է, հույսի գույնն է: Ամեն անգամ, երբ Հայաստանը որևէ փորձության միջով է անցել, մի խաչելության է ենթարկվել, միշտ հարության հույսն է փայփայել: Եվ ամեն անգամ, երբ եկել է հարությունը հայ ժողովրդի համար, նորից են միմյանց հաջորդել փորձությունն ու խաչելությունը, սակայն հայ ժողովուրդը երբեք չի կորցրել իր հույսը, և Աստված միշտ նրան նոր հարություններ է պարգևել:

Երրորդը՝ նարնջագույնը, խորհրդանշում է մշակույթը, որ Հայաստանի կյանքի թե՛ պատմության և թե՛ ներկայի անբաժանելի մասնիկն է:

Երկու օր առաջ Երևանում, Արամ Խաչատրյանի անվան դահլիճում իմ պատվին տրված համերգի ժամանակ, Նորին Սրբությունն ասաց, որ Հայ Եկեղեցին միշտ կանգնած է իր ժողովրդի կողքին, իսկ հայ ժողովուրդն իր հերթին միշտ կանգնած է իր եկեղեցու կողքին, և այս երկու գործոններն են ստեղծում հայ մշակույթը: Հետևաբար, Եկեղեցի, ժողովուրդ և մշակույթ, այս է Հայաստանը, ինչպես նշեց Նորին Սրբությունը:

Քիչ առաջ, երբ այստեղ էինք գալիս, մեր ներկայացուցիչներից մեկը, պարոն Պապադոպուլոսը ասաց, որ սա Արմենիա՝ Հայաստան չէ, սա հարմոնիա է, այսինքն՝ ներդաշնակություն է: Այս երեք օրվա ապրումներից հետո, ես անվարան կերպով կարող եմ հայտարարել, Նորին Սրբության խոսքերով ասած, որ Հայաստանը դա Եկեղեցին է, և Հայաստանը դա ներդաշնակություն է:

Քիչ հետո մենք պետք է մեկնենք Գյումրիից, իսկ վաղը, երեկոյան՝ Հայաստանից, սակայն մենք մեզ հետ պիտի տանենք այն ներդաշնակությունը, որ այստեղ ստացանք, պիտի տանենք Կոստանդնուպոլիս, Տիեզերական Պատրիարքության Աթոռը և մեր հետագա ամբողջ կյանքի ընթացքում այդ ներդաշնակությունը մեզ հետ կլինի և մենք միշտ կաղոթենք Հայաստանի, հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու բարօրության համար»:

Վերջում մանկական երգչախմբի անդամներին, ինչպես նաև մյուս ելույթ ունեցողներին փոքրիկ նվերներ հանձնեցին նախ Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակոր դեսպան Յակովոս Սպեցիոսը, ապա Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԴԱՍԻ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Հրաժեշտ տալով հյուրասեր և արտաքաց գյուղացիներին, երկու Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները վերադարձան քաղաքամայր Երևան՝ հյուրերի ընդունման կառավարական տուն, ուր երեկոյան տեղի ունեցավ Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի հանդիպումը Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի և Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների հետ:

Հանդիպումը նախագահում էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հանդիպման ընթացքում շոշափվեցին երկուստեք հուզող հարցեր, որոնք առնչվում էին Հայ և Հույն Եկեղեցիների բարեկամության առավել սերտացմանը, Եկեղեցիների համեղբայրությանը, ինչպես նաև մեր օրերում բոլոր քրիստոնյա Եկեղեցիների առջև ծառացած ընդհանուր խնդիրներին, որոնց հապշտապ լուծումը դուրս է գալիս մեկ Եկեղեցու սահմաններից՝ դառնալով էկումենիկ շարժման հիմնական առանցքը:

ՀՈՒՆԱԾԵՍ ՊԱՏԱՐԱԳ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Այցելության վերջին օրը, հուլիսի 24-ին, առավոտյան ժամը 9-ին, երկու քույր Եկեղեցիների պաշտոնական պատվիրակությունները, կույգ Հովվապետերի գլխավորությամբ, ներկա գտնվեցին Սուրբ Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում մատուցվող հունածես Ս. Պատարագին:

Մատուցվող Ս. Պատարագին ներկա էին Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակոր դեսպան Յակովոս Սպեցիոսը տիկնոջ և դստեր հետ, պաշտոնատար այլ անձինք, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, Հայաստանի տարբեր շրջաններում բնակվող հունական համայնքների ներկայացուցիչներ:

Օրվա պատարագիչն էր Տ. Սերաֆիմ վարդապետը:

Հընթացս մատուցվող Ս. Պատարագի Սուրբ Հաղորդություն ստացան ներկա հույն հավատավոր կավակունք:

Ապա ներկաներին իր հայրապետական պատգամը հղեց Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ս Տիեզերական Պատրիարքը:

Վերջում տեղի ունեցավ աջահամբույր և բաժանվեցին փոքրիկ խաչեր:

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՐ ՎԻՐԱՊ

Սուրբ Պատարագի ավարտից հետո ավտոմեքենաների շարասյունն ուղղվեց դեպի Խոր Վիրապ՝ հայոց հավատի հոր չարչարանաց այն վայրը, որտեղից ճառագեց փրկության լույսն ի Հայաստան:

Այստեղ բարձրաստիճան հյուրերին դիմավորեցին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վանահայր Մխիթար քհն. Սարիբեկյանը և մեծաթիվ հավատացյալ հայորդիներ:

«Հրաշափառ»-ով մուտք գործելով տաճար, երկու Եկեղեցիների հոգևոր առաջնորդները գոհաբանական աղոթք առաքեցին առ Բարձրյալը, ապա ներկաներին հղեցին իրենց հայրապետական պատգամը:

Ներկայացնելով ուխտատեղիի պատմական նշանակությունն ու կարևորությունը հարապատ ժողովրդի հոգևոր կյանքում, Ամենայն Հայոց Հայրապետն ասաց.

«Մեր շատ սիրելի հավատացյալներ, նվիրյալներ Խոր Վիրապի այս եկեղեցու, որ գալիս եք, երգում եք Պատարագին և եկեղեցուն կենդանություն եք տալիս, ապրե՛ք, հազա՛ր ապրեք: Ամեն անգամ, երբ ես այստեղ եմ գալիս ու ձեզ տեսնում եմ, սիրտս հրճվում է, կամքս զորանում,

երբ ձեր բոլորին տեսնում եմ այսպես հավատարիմ մեր Սուրբ Եկեղեցուն և այս նվիրական ուխտատեղիին:

Ձերդ Սրբություն, մենք գտնվում ենք մի այնպիսի վայրում, որ Էջմիածնից հետո, քրիստոնեության դարձի պատմության տեսակետից, մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու ամենանվիրական վայրերից մեկն է: Ես պետք չունեմ մեր սիրելի եղբայրներին ասելու այն, որ իրենք չգիտեն: Ամեն ինչ գիտեն իրենք»:

Նշելով, որ քրիստոնեությունն ընդհանրապես և Հայաստանում առանձնապես բազմաթիվ փորձությունների է ենթարկվել, Բարդուղիմեոս Ա Պատրիարքը մաղթեց Հայաստանին և հայ ժողովրդին ներքին հոգեկան անկախություն, հարատև խաղաղություն և, Ս. Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ, Աստծու հովանավորությունը Հայաստան աշխարհի վրա: Ապա Հույն Ուղղափառ Եկեղեցու քահանայապետն ավելացրեց.

«Ձերդ Սրբություն, շնորհակալություն ենք հայտնում Ձեզ, որ այսօր մեր ոտքերն ուղղեցիք դեպի այս սուրբ վայրը: Մենք մեր եկեղեցում նույնպես սրբացնում ենք և միշտ գոհաբանում ենք Հայաստանի լուսավորիչ Սուրբ Գրիգորին: Մեր օրացույցի մեջ ամեն տարի սեպտեմբերի 30-ին տոնախմբում ենք այդ հիշատակը: Հետևաբար մեզ համար նույնպես այս տեղը, որտեղ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը առանձնացած աշխարհից 13 տարի ապրել է, մեզ համար նույնպես սուրբ վայր է և ուխտագնացության վայր: Գրիգոր Լուսավորչի սուրբ անձնավորությունը անբաժանորեն կապված է Հայաստանում քրիստոնեության հաստատման փաստի հետ: Մենք գիտենք, որ դուք պատրաստվում եք հանդիսավոր կերպով չորս տարի հետո նշելու քրիստոնեության պետականացման 1700-ամյակը: 2000 թվականին մենք պետք է տոնակատարենք Հիսուս Քրիստոսի՝ Աստծու Որդու մարդացման, երկիր իջնելու 2000-ամյակը: Միայն երեկ մեր եղբայրական երկխոսության ժամանակ մենք անդրադարձանք այդ թեմային և պատմեցինք, թե ինչպես ենք նախապատրաստվում այն նշելու:

Քրիստոնեությունն ընդհանրապես և հատկապես Հայաստանում պատմության ընթացքում բազմաթիվ դժվարությունների, փորձությունների և խաչելությունների է հանդիպել: Ձեր երկիրը 70 տարիներից ավելի իր ուսերին կրել է կոմունիստական աթեիզմի խաչը: Այժմ, երբ Աստված ձեզ շնորհել է քաղաքական անկախություն, որովհետև ներքին հոգեկան անկախությունը դուք միշտ ունեցել եք, մաղթում եմ, որ ձեր ժողովուրդը և ձեր երկիրը ունենա մնայուն և հարատև խաղաղություն: Աստված Սուրբ Գրիգոր Լուսավորչի միջնորդությամբ թող հովանի լինի մեր երկու եկեղեցիներին և մեզ առաջնորդի դեպի ամբողջական միություն, դեպի ամբողջական հաղորդություն. ամեն»:

Այնուհետև Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը արծաթյա մի բուրվառ հանձնեց վանքին, իսկ Տ. Մխիթար քահանա Սարիբեկյանին՝ լանջախաչ:

Ամենայն Հայոց Հայրապետը, առաջնորդելով բարձրաստիճան հյուրերին դեպի մեր հոգու Լուսավորչի տաճարանաց վիրապը,

ՍՈՍԱՅԻՍ ՀՈՍԱՆՆԻ ԿԵՐԵՄ

Բարդուղիմեոս Ա Պատրիարքին հանգամանալից ու մանրամասնորեն ներկայացրեց վիրապի, վրան կառուցված մատուռի, ինչպես նաև ողջ վանքի գեղեցիկ և ուսանելի պատմությունը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՇԵՐՈՒՅԹ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑՈՒՄ

Օրվա երկրորդ կեսին, ժամը 13.00-ին, «Արմենիա» հյուրանոցի ընդարձակ սրահում, ի պատիվ Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքի, տրվեց պաշտոնական ճաշ, որին մասնակցում էին ՀՀ կառավարության անդամներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական այրեր, Մայր Աթոռի միաբաններ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Խոսելով Տիեզերական Պատրիարքի այցելության պատմականության մասին, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ի մասնավորի ասաց.

«Սիրելի եղբայր ի Քրիստոս, Ձերդ Սրբություն Բարդուղիմեոս Ա, հյուրեր և սիրելի Հոգևոր եղբայրներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներ.

Այս չորս օրերը Հայաստանի ողջ ժողովուրդը զգաց, որ մի նոր էջ բացվեց մեր եկեղեցու և մեր Հայրենիքի պատմության մեջ Նորին Սրբության այցելությամբը, որ առաջինն էր իր տեսակի մեջ, և որի համար Մենք անհունորեն երջանիկ ենք: Ինչպես մի անգամ ասացի, այստեղ ևս կրկնում եմ, այս հողի վրա ժամանակին, Հայաստանի հողի վրա, բյուզանդական բանակներ են անցել: Հայաստանի և Բյուզանդիոնի միջև եղել են ժամանակներ՝ ներքին պայքարի ժամանակներ, բայց այսօր խաղաղարար ոտքն է գալիս Կոստանդնուպոլսո Տիեզերական Պատրիարքության Հույն Օրթոդոքս Եկեղեցու Հոգևոր Պետի հետ:

Մեզ համար պատմությունը շարունակություն է և փոփոխություն և դեպի լավը փոփոխություն, պայքարից դեպի գործակցություն, պատերազմից դեպի խաղաղություն և եղբայրություն: Այս է կյանքի քրիստոնեական ճշմարիտ ընթացքը»:

Գոհունակությամբ և երախտագիտությամբ արտահայտվելով Նորին Սրբության կողմից հյուրընկալվելու առիթով, Տիեզերական Պատրիարքն ավելացրեց.

«Ձերդ Սրբություն, սիրելի եղբայր ի Քրիստոս, Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, հարգարժան պարոն նախարարներ և պետական իշխանությունների ներկայացուցիչներ, հարգարժան դեսպաններ և դիվանագիտական ներկայացուցչությունների անդամներ, սիրելի ներկաներ.

Մեր խորին ուրախությունն ու գոհունակությունն ենք արտահայտում այս ընդունելության համար, որ տրվում է Արևելյան Ուղղափառ Եկեղեցուն, և ես, որ հանդիսանում եմ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների բոլոր տեղական Աթոռների մեջ առաջինը, այս միջոցով պատվվում է ոչ թե աշխարհային ուժը, որին երբեք Ուղղափառ Եկեղեցին չի հետապնդել, որի

առջև սակայն շատ-շատերը խոնարհվում են, այլ այս կերպ պատվվում է Քրիստոսի մեջ ազնվությունը և բարությունը, որի անխոնջ քարոզիչներն ենք մենք ըստ մեր մարդկային ուժի կարողության, մեր կարողություններին համապատասխան:

Շատ հաճախ իրենց հզոր զգացողները բռնության միջոցով փորձում են իրենց կամքը պարտադրել թույլերին՝ բարությունը համարելով անիմաստ առաքինություն, որ տեղ չունի ամեն տեսակի հակադրությունների մեջ: Սակայն, ինչպես ուսուցանում է պատմությունը, այսպես մտածողներից շատերը հաճախ ստիպված են եղել խոստովանելու, որ ճնշումներն օգտակար չեղան, քանի որ առաջացրին հուզումներ, առաջացրին բռնկումներ և սպասվելիք օգուտի փոխարեն շատ վնասներ հարուցեցին: Սա հաստատում է նաև ճշմարտապես նույն Ինքը՝ Հիսուս Քրիստոս, ասելով, որ ամեն ոք, ով ձեռքը կվերցնի սուրը, սրով կընկնի: Այս նշանակում է, որ բռնությունը ստեղծում է հակաբռնություն, և այդպիսով կարող ենք ապրել անվերջանալի հուզումների մի շրջապտույտ, որից դուրս գալու հույս չենք ունենա, եթե չփոխենք մեր մտայնությունը: Մենք մեր մարդկային տկար ուժերի, կարողությունների համապատասխան ամենուր քարոզել ենք, որ չարիքը երբեք օգուտ չի բերում, և որ բարությունն ավելի օգտակար է:

Մենք անչափ ուրախ ենք, որ այս ներկա ընդունելությունը մեր համեստության պատվին, մեկ անգամ ևս վկայում է, որ երկու հազար տարի շարունակ մենք սաղմոսում ենք, թե երբեք չենք փոխել մեր սրտում եղածը, մեր մտածումները և շատ հաճախ հույսի ավետումն ու դեպի ավելի լավ ապագայի նկատմամբ մեր աղոթքները պետք է կառուցվեն սիրո ու բարության վրա, այլ ոչ թե ատելության: Մենք շատ հաճախ մեր կյանքի ընթացքում ճաշակել ենք դաժանության և ատելության դառնությունը: Եղել են նաև երջանիկներ, որ դրա հետ մեկտեղ ճաշակել են նաև երանության քաղցրությունը, ուրախությունը և ազատությունը: Մենք այսօր մեր համեստության պատվին տված այս ընդունելության ժամանակ ապրում ենք և արտահայտում մեր ուրախությունն ու գոհունակությունը: Ասում եմ՝ ապրում ենք այն բարի զգացումները, որ զգում ենք ձեր բոլորի կողմից: Մենք զգում ենք, որ բոլոր մարդիկ իրենց էության խորքում թաքցրած ունեն բարությունը, անշուշտ նաև չարությունը: Սակայն մենք այն բնությամբ, որ ստեղծված ենք, մեր մեջ կրում ենք բարության բնությունը, քանի որ ստեղծվել ենք Աստծու կողմից շատ լավ: Հետևաբար մեզ համար դժվար չէ բարության դրսևորումը: Եթե չկարողանանք դիմագրավել այն դժվարությունները, որ առաջ են բերում չարիքը, ավելի նպատակահարմար է, որ հետևենք Քրիստոսին՝ բարության կատարյալ էությանը, որպեսզի Նա մեզ օգնի, և մենք մեր հոգու երակներում կարողանանք տիրապետող դարձնել բարությունը: Քանի որ մեր էությունը բարության էությունն է և քանի որ մենք հաճախ ճաշակում ենք բարության արդյունքները, մեր բանականությունը մեզ հուշում է, որ շատ հաճախ ուրախությունը կարևոր է՝ բարությունն զգալու համար: Այն հույսով և այն հավատքով, որ հետայսու մարդկությունը տրամաբանությամբ պիտի վերաբերվի և պետք է հեռու վանի հոռի զգացումները, որպեսզի տիրապետող դառնա բարությունը, ես ի սրտե ողջունում եմ բոլորիդ, որ

հավաքվել եք այստեղ, և արտահայտում եմ իմ մեծ ուրախությունն ու գոհունակությունը: Շնորհակալություն»:

Հավարտ պաշտոնական ճաշկերույթի, երկուստեք փոխանակվեցին հուշանվերներ: Գարեգին Ա Կաթողիկոսը Տիեզերական Պատրիարքին նվիրեց Տերունական աղոթքի տեքստով մի գորգ, իսկ Բարդուղիմեոս Ա-ը Վեհափառ Հորը հանձնեց արծաթյա գավաթներ, պանակ և մի սրբապատկեր:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՈՒՆԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Պաշտոնական ճաշկերույթի ավարտից հետո, Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն իր շքախմբի ուղեկցությամբ այցելեց Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի դեսպանատուն, ծանոթացավ աշխատակազմին, զրուցեց աշխատակիցների հետ:

Ընդգծելով դեսպանատան գործունեության կարևորությունը Հայոց երկրում, Բարդուղիմեոս Ա Պատրիարքն առանձնակի շեշտեց, որ այն սեփական երկրի հայելին է: Որքան պարզ ու նվիրումով գործեն, այնքան պարզ կլինի նաև հարապատ երկրի արտացոլանքը, ինչպես նաև կբարձրանա հույն ժողովրդի պատիվը, քանզի երկու ժողովուրդներն էլ պատմականորեն մեծ ընդհանրություն ունեն:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ, «ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ» ԳԱՆՁԱՏԱՆԸ

Տիեզերական Պատրիարքության Աթոռ մեկնելուց առաջ, բարձրաստիճան հյուրերը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղեկցությամբ, օրվա ընթացքում շրջեցին նաև Մայր Աթոռի թանգարաններում, դիտեցին հայոց աղամանդակուռ այբուբենը, հանրահայտ նկարիչների վրձնի արգասիքները, «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատանը մոտիկից ծանոթացան սրահների ցուցադրանքին, նրանց պատմությանը:

Վերջում պատվարժան այցելուները հմայքով և անթաքույց կարմանքով արտահայտվեցին իրենց տեսածի մասին, շնորհակալություն հայտնեցին Հայոց Հայրապետին՝ այսքան հետաքրքիր բացատրությունների համար:

ՈՂՋԵՐԹԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Երեկոյան ժամը 19.00-ին Հույն Եկեղեցու պաշտոնական պատվիրակությունը, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, կանգերի դողանջներով առաջնորդվեց դեպի Մայր Տաճար:

Իջման Սուրբ Մեղանի առջև երկու հոգևոր առաջնորդները ողջերթի աղոթք առաջեցին առ Աստված, ապա փոխանակեցին հրաժեշտի ջերմ խոսքեր:

Բարի ճանապարհ մաղթելով Հույն Ուղղափառ Եկեղեցու պետին, Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն առանձնակի նշեց.

«Եկած է պահը, երբ իր ավարտին կհասնի Ձեր այս առաջին այցելությունը ի Հայաստան և Սուրբ Էջմիածին: Փառք և գոհություն կուտանք Աստուծո, որ այս չորս օրերը եղան օրհնաբեր և օգտաշատ օրեր մեր ժողովրդի վերարթնության և մեր երկու եկեղեցիների ու ժողովուրդների միջև բարեկամության, գործակցության զորացման օրեր դարձան:

Եվ այժմ եկած է պահը, երբ հրաժեշտ պիտի առնեք մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն և պիտի վերադառնաք Կոստանդնուպոլիս՝ Տիեզերական Պատրիարքություն: Մենք կաղոթենք այստեղ, որ Աստված Ձեր ճանապարհը ի բարին կատարե և Կոստանդնուպոլսո Պատրիարքությանը տա բարգավաճության և ծառայության, աճման ու զարգացման այնպիսի օրեր, որ Ձեր գահակալության շրջանին պատմական և նվիրական այդ Աթոռը առավել ևս ծաղկի Քրիստոնեական Ընդհանուր Եկեղեցվո անդաստանի և Քրիստոնեական Եկեղեցվո միության ծառայության դաշտին մեջ:

Բարով գնաք, և թող Աստված օրհնի Ձեզ. ամեն»:

Իր և իր պատվիրակության անդամների անունից խորին շնորհակալություն հայտնելով այդքան ջերմ ու սիրալիր ընդունելության համար, Նորին Սրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն ասաց.

«Ձերդ Սրբություն,

Ձեզ հետ միասին փառաբանում ենք Աստծուն, որ մեզ հնարավորություն տվեց խոնարհվելու այս Սուրբ վայրի, Հայ եկեղեցու մյուս սրբավայրերի առջև, ինչպես նաև հնարավորություն տվեց ավելի զարգացնելու երկու եկեղեցիների միջև արդեն գոյություն ունեցող եղբայրական կապերը: Մեզ բաժանում են շատ քիչ, սակայն միացնում են այնքա՜ն շատ բաներ: Այդ ամենին մենք ծանոթացանք մեր եկեղեցական գրքերի միջոցով, սակայն նաև այստեղ իրական զգացումներով ապրեցինք այն: Այնքան մեծ է մեր փափագը երկու եկեղեցիների միության իրականությունը տեսնելու համար և մեր փափագի հետ միասին նաև մեր ժողովուրդների փափագը, որ Աստված անպայման լսի և շուտ մոտեցնի այդ օրը:

Շնորհակալություն և երախտագիտություն ենք հայտնում Նորին Սրբությանը այս մի քանի օրերի հյուրընկալության համար: Սրբազան հայրերը, որ ուղեկցում են ինձ, և մեր պատգամավորության մյուս անդամները ևս հայտնում են իրենց շնորհակալությունը Հայ եկեղեցու հոգևորականներին: Բաղմաչարչար, սակայն բարեպաշտ և քաջ հայ ժողովրդին թողնում ենք մեր օրհնությունները: Մաղթում ենք և միշտ պիտի մաղթենք Հայ եկեղեցուն բարօրություն թե՛ Հայաստանում և թե՛ ողջ աշխարհում»:

Այնուհետև, մեկնումից առաջ, համաձայն Մայր Աթոռ ժամանման հենց առաջին իսկ պահին հայտնած ցանկության, Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հոգևոր եղբորն առաջնորդեց դեպի Մայր Տաճարի Ավանդատուն, ուր պահվում են մեր Եկեղեցու Սուրբ Հայրերի Աջերը, ինչպես նաև նվիրական այլ մասունքներ՝ համբուրելու Սուրբ Գրիգոր Լուսավորչի Սրբազան Աջը:

Այս խորախորհուրդ պահից հետո, ժամը 20.00-ին, ավտոմեքենաների

շարասյունը Հույն Եկեղեցու բարձրաստիճան հյուրերին, Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ, առաջնորդեց դեպի «Զվարթնոց» օդանավակայան:

Այստեղ, բարձրաստիճան հյուրերի սպասասրահում, ի պատասխան այն հարցի, թե ինչպե՞ս կբնորոշեիք ու կարժևորեիք այս այցելությունը, Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն ասաց.

«Այս այցելության նպատակը զորացնելն էր երկու եկեղեցիների, երկու երկրների, երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը մանավանդ այն նոր մթնոլորտի մեջ, որ քրիստոնեական միության զորացման շարժումն է, որ կոչվում է էկումենական շարժում:

Մենք անհունորեն ուրախ ենք Տիեզերական Պատրիարքի այցելության համար: Արդեն ասված այսքան գեղեցիկ խոսքերին ես չեմ ուզում այլևս որևէ բան ավելացնել, բայց ցանկանում եմ իմ խորը շնորհակալությունը և գնահատանքի խոսքը հայտնել թե՛ մեր պետական իշխանություններին և թե՛ մեր հաղորդակցության միջոցներին՝ հեռուստատեսության, ռադիոյի, մամուլի աշխատակիցներին, որ այնքան կենդանի կերպով մեկնաբանեցին Նորին Սրբության այցելության բոլոր օրերը: Վստահ եմ, որ մեր ժողովուրդը զգաց, որ Հայոց Առաքելական Եկեղեցին ընդհանուր Տիեզերական Եկեղեցին մեջ իր տեղը ունի, արժեքը ունի, և Պատրիարքի այցելությունը առավել ևս հոգևոր արթնության և մեր Եկեղեցու ամրության ու զորացման պիտի ծառայի: Այդ է իմ սպասումը, և վստահ եմ, որ Աստված իմ սպասումի մեջ ինձ հուսախաբ չի անի»:

Իսկ Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքն այսպես գնահատեց Հայոց հողում անցկացրած իր հյուրընկալության օրերը.

«Մեր այցելության պտուղները պիտի երևան ավելի ուշ: Այս օրերին երկուստեք մեկ անգամ ևս հաստատեցինք Հայ և Հույն Եկեղեցիների, ինչպես նաև Գարեգին Ա Կաթողիկոսի հետ Մեր ունեցած վաղեմի սերն ու բարեկամությունը:

Մենք գիտենք, որ մեր երկու եկեղեցիներն ու ժողովուրդները շատ մոտ են կանգնած միմյանց: Բայց այդ մտերմությունը առավել զգացվեց, երբ մտերմության ջերմությունն ապրեցինք այստեղ: Այն մեր պատկերացրածից շատ ավելին էր:

Հիմա, երբ վերադառնում եմ իմ Աթոռը, թերևս ինձ չճանաչեն ու հարցնեն, թե ի՞նչ է պատահել մեր Պատրիարքի հետ: Դա բացատրվում է նրանով, որ ես վերադառնում եմ առանց սրտի. իմ սիրտը թողնում եմ այստեղ՝ Հայաստանում:

Շնորհակալություն բոլորին այս ամենի համար: Շնորհակալություն Նորին Սրբությանը և պետական իշխանություններին, որ հարգեցին անձնապես ինձ և մեր եկեղեցին:

Թող Աստծո օրհնությունը միշտ հովանի լինի քաջ և իմաստուն Հայ ժողովրդին. ամեն»:

ՄԵԿՆՈՒՄ

Ժամը 20.30-ին, հրաժեշտ տալով Հայոց հինավուրց աշխարհին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Ամենայն Հայոց Հայրապետին և նրա շքախմբի

մյուս անդամներին. Հույն Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Բարդուղիմեոս Ա Կոստանդնուպոլսի Տիեզերական Պատրիարքն իր գլխավորած պատվիրակության հետ վերադարձավ Կոստանդնուպոլիս:

«Զվարթնոց» օդանավակայանում բարձրաստիճան հյուրերին ճանապարհեցին Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր շքախմբով, Կրոնից գործոց պետական կոմիտեի նախագահ Լապար Սուջյանը, Հայաստանում Հունաստանի արտակարգ և լիակորդ դեսպան Յակովոս Սպեցիոսը, թեմական առաջնորդներ, արտերկրից ժամանած բարձրաստիճան հոգևորականներ, բարձրաստիճան պաշտոնյաներ:

***

Հիրավի անմոռանալի օրեր գրանցվեցին Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցու բակմադարյան տարեգրության մեջ, օրեր, որոնք ըստ արժանվույն կգնահատի միայն պատմությունը:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՐՄԵՆ ՍՐԿ. ԽԱՉԱՏՐՅԱՆ